264.025:281.6a
V - 29
1876

264.025:281.62
Մ-29

# ՄԱՇՏՈՑ

# ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

## ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԸՍՏ ԾԻՍԻՑ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ

ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1876 – ՌՅԻԵ.

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.**

**ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.**

8542

ԳԱՐԵԳԻՆ Ա.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քան զամենայն հանդէս պանծալիս արարողութեանց եւ ծիսից Հայաստանեայցս Եկեղեցւոյ շքեղաշուք եւ վայելչազարդ լեալ են անդստին ի սկզբանէ գերահռչակ հանդէսք ձեռնադրութեան Եպիսկոպոսաց, օրհնութեան սրբալոյս Միւռոնին, եւ օծման Կաթուղիկոսաց ազգիս մերոյ: Եւ կարի յիրաւունս. զի որ եպիսկոպոսականին արժանացեալ գտանիցի պատուոյ եւ աստիճանի, նա ինքն է որ եւ զայլոցն ամենայն խորհրդոց Եկեղեցւոյ պատրաստէ եւ կարգէ մատակարարս եւ տնօրէնս եւ պաշտօնեայս, զդպիրս ասեմ եւ զսարկաւագունս եւ զքահանայս· ուստի եւ արժան իսկ է նմա յառնուլ անդ զիւրն պաշտօն՝ առաւելագունիւ վայելչանալ շքով արտաքին եւս պատրաստութեանց՝ ի նշանակ ներքնոցն կատարելութեանց՝ որ պահանջին ի նմանէ:

Իսկ սրբալոյս Միւռոնին օրհնութիւն, զոր հրեշտակն ի մարմնի Գրիգոր Նարեկացի յաճախագոյն պերճաբանութեամբ դրուատելով կոչէ «Պատկեր պանծալի Արարչին երկնի եւ երկրի... ճառագայթ շնորհաց, լուսաւորութիւն աչաց, ձեռնադրիչ նուիրելոց, զգուշութիւն մաքրոց, պսակ թագաւորաց, ճոխութիւն արքայից, յառաջադիմութիւն կայսերաց», եւ որ այլն եւս, մի է ի պատուականագունիցն եւ ի ցանկալի նպատակաց ուխտի ջերմեռանդն որդւոց սրբոյ Աթոռոյս. որք եւ ի լուր կատարման այնր հանդիսի՝ խուռնընթաց բազմութեամբ դիմեն ի սուրբ Էջմիածին՝ տեսողս լինել մեծաշուք հանդիսին, եւ հաղորդս շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ որ օծմամբ սրբալոյս իւղոյն սփռին ծաւալին ի հաւատացեալս Քրիստոսի:

Ոչ ինչ նուազ վսեմական եւ հրաշափառ արարողութիւն է օծումն Կաթուղիկոսաց ազգիս Հայոց, որ կատարի ի տաճարի աստ Արարատեան Մայր Աթոռոյս· քանզի հաւանեալ իսկ է բարեպաշտօն ազգս մեր առհասարակ, զի եւ այս հանդէս չնաշխարհիկ մի է ի նշխարաց վաղնջուցն արքունական եւ եկեղեցական գերագոյն շքեղութեանց՝ յորս վայելէր երբեմն. այլ եւ հաւատալով հաւատայ, զի իւղն սուրբ եւ գերափառ իջեալ զեղեալ ըստ բանի Սաղմոսերգուին ի գլուխ եւ ի մօրուս Նորոյն մերոյ Ահարովնի, եւ ի մօրուացն ի գրապանս զգեստու նորա, ի պաշտօնեայս ասեմ Եկեղեցւոյ որ ընդ իշխանութեամբ նորա գտանին, եւ նորօք զետահետի ի հոյլս ժողովրդոցն հաւատացելոց ի խնամս Հայրապետին օծելոյ, միակ մխիթար է սրտի եւ ոգւոյ որդւոց հարազատից սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին:

Թէ որ ինչ մասն կարգացս այսոցիկ ի սեպհական եւ ի վաղեմի աւանդից մերոյ Եկեղեցւոյս իցէ, եւ որ եկամուտ, ոչ է հնար ճշգիւ գտակաւ ասել· զի թէպէտ եւ տիպք կերպարանաց եւ հնոց հնութեան այնպիսեացն մասանց բազում ուրեք նշմարին յաղօթսն եւ ի քարոզս, սակայն յանցանել գնալ բազմադարեան ժամանակաց, ի փոխագրել նօտարացն զպատճէնս արարողութեանցն այնոցիկ տեսանի ոչ սակաւ լեալ փոփոխութիւն եւ յայսմ մասին, որպէս յայտ է եւ ի համեմատութենէ հին եւ նոր գրչագրաց ամբարելոց ի դարանս մատենից սրբոյ Աթոռոյս:

Այսմ ամենայնի քաջ խելամուտ գոլով Վեհափառ Հայրապետս մեր Տէր Գէորգ Դ, Աստուածընտիր Կաթուղիկոս ամենայն Հայոց, փոյթ ի մտի կալաւ

այս առաջին անգամ ի տիպ արծանացուցանել եւ զերեսին կանոնս արարողութեանց մերոյ Եկեղեցւոյս յառանձինն սլէտս Հայրապետական Աթոռոյս, եւ այն զի մի եւս անկանիցին հանդէսք արարողութեանցս այսոցիկ ընդ յեղափոխութեամբ եւ ընդ կամաւոր կամ ակամայ այլայլութեամբ դրչաց: Աւ այս ի մի վայր ժողովեալ Հայրապետին զգրչագիրս Մատենադարանի վանիցս, թուով աւելի քան զքսան եւ չորս, եւ ընդ միմեանս զնոսին համեմատեալ, զընտրելագոյնիցն ի նոցանէ առեալ ընկալաւ զընթերցուածըս, զվրիպական ինչ ասացուածոց յեղանակսն ուրեք ուրեք ուղղադրեաց, եւ առաւելագունիւ իմն մտադրութեամբ զխրատու պատուիրանսն որ ի սոսա մեծաւ խնամով պարզաբանեաց, եւ եդ ի կարգ եւ ի յօրինուածութիւն վայելուչ, առաջի աչաց ունելով մանաւանդ զերկոսին զգեղեցկագիր եւ զգեղազարդ օրինակս մաղաղաթեայս զաղափարեալս ձեռամբ հոգելոյս Կաթողիկոսին ազգիս Տեառն Եփրեմի, յայնժամ վարդապետի աշակերտելոյ բազմարդիւն եւ բարեյիշատակ Կաթողիկոսին Սիմէօնի Երեւանեցւոյ, որոյ եւ ի վայելս է պատրաստեալ:

Կամ եղեւ Սրբազան Հայրապետին մերում տալ համաչափ եւ համանման վայելչութեամբ տպագրել զերեսին զգիրագոյն արարողութիւնքս զայսոսիկ, զկանոնս ասեմ ձեռնադրութեան Եպիսկոպոսի եւ զօրհնութեան Միւռոնի, եւ զօծման Կաթողիկոսաց. եւ զի դիւրին լինիցի ի գործ զսոսա արկանել՝ ուիշ ուիշ եւ յօրինել զկազմ եւ զպա՛տրաստս սոցին:

Մնայ մեզ շնորհապարտս խոստովանել Մեծի Հայրապետիս եւ զանձինս մեր եւ զազգ մեր ողջոյն յաղագս այսպիսեաց եւ այսքան փութաջան վաստակոց սորին, եւ մաղթել յաղբերէն կենաց եւ փրկութեան մերոյ, ի պարգեւողէն ամենայն շնորհաց սրբոյ Եկեղեցւոյ, շնորհազարդ պայծառացուցանել զզաւազան իշխանութեան մերոյ Հայրապետիս ընդ ամս բազումս ի փառս ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. որում փառք յաւիտեանս. ամէն:

Վազգէն Ա

# ԿԱՆՈՆ

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հանդերձեալ Հայրապետին ձեռնադրել զոք ի պաշտօն Եպիսկոպոսութեան, նախ ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ լինի ընտրութիւն եւ ուխտադրութիւն արժանաւորին, եւ ապա կոչմամբ եւ ձեռնադրութիւն եւ օծումն ըստ առաջնոյ կարգաց:

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ի ծխականաց ուրուք Աթոռոյ իցէ ընտրեալն յԵպիսկոպոսութիւն, ըստ առաջադրութեան վեհ. Հայրապետի Արքեպիսկոպոսունք եւ Սինոդականք Ս. Էջմիածնի պարտին անդանօր տալ վկայութիւն՝ թէ իցէ նա արժանաւոր այնմ աստիճանի, այս ինքն լի հաւատով եւ ընտիր վարուք հեզ, ժուժկալ, բարեսէր, հեռի յագահ փառասիրութեան եւ արծաթսիրութեան եւ յամենայն ախտից մարմնականաց. այլ եւ զարդարեալ ամենայն առաքինութեամբք՝ որք անկ են ճշմարիտ հովուաց հօտին Քրիստոսի, եւ հմուտ կարգաց աստուածաբանութեան եւ հին եւ նոր կտակարանաց, նաեւ եւ արտաքնոյն գիտութեանց:

Իսկ եթէ ի հեռաւոր վիճակաց առնուցու իցէ ընտրեալն, զոր օրինակ ի Տաճկաստանէ գաւառաց, պարտի ընտրեալ լինել ի ժողովրդոյն այնր վիճակի եւ ի ժամանակաւորաց Եկեղեցեացն որոց վասն ընտրանելոյ է աստիճանն այն, եւ առնել վկայութիւն՝ թէ ըստ որոց հասակին այր է կատարեալ. ըստ հաւատոյն ուղղափառ եւ որդի հարազատ եւ հաստատուն Հայաստանեայց Եկեղեցւոյ, ըստ մտացն լուսաւորութեան հմուտ հին եւ նոր կտակարանաց եւ կանոնաց Եկեղեցւոյ եւ վարդապետութեան Հարցն մերոց, նաեւ արտաքնոյն գիտութեանց, եւ ըստ բարուց բարեացն եւ վարուց՝ անարատ եւ անարգել, լի սրբութեամբ եւ խոնարհութեամբ եւ առ կարօտեալսն ողորմածութեամբ, հեռի յորկորամոլութենէ եւ յարծաթսիրութենէ, եւ միշտ անխափան խրատուց, աստուածածանօթ եւ օրինապահ:

Եւ առնել զինքնագիրս ընտրողացն կարգ եւ վկայագիր Մերձաւոր եկեղեցական իշխանութեան, այս ինքն զԱրքեպիսկոպոսի կամ զԱռաջնորդի գաւառին, զոյ է առաջ Աթոռոյ, եւ մատուցանել զվկայագիրսն Հօրն Տեառն. եւ նա յետ ընթեռնլոյ զթղթեանն եւ առնելոյ զպարտաւորական հարցափորձութիւնն՝ սահմանէ զժամանակ ձեռնադրութեան ընծայելոյն:

Երկուշաբթի յառաջ քան զձեռնադրութիւնն պարտաւոր է սա Սինոդական Եպիսկոպոսաց տանել զընծայեալն զինի առաջնեան ժամերգութեան յեկեղեցի, եւ տալ նմա կատարել զերդումն եւ զուխտ եպիսկոպոսական աստիճանին այսպէս: Ընծայեալն առնելով զգեցեալ զշուրջառ՝ ի ծունկս լինի առաջի սեղանոյ Իջման տեղւոյն, եւ Եպիսկոպոսունք կանգնեն երկուստեք սեղանոյն. եւ նա ընթեռնու զառաջիկայս զԵրդման եւ ուխտի գրեալ յառանձինն թերթի:

*«Յանուն ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, յերկրպագելի տեղւոջ իջման Միածնի բանին Հօր՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առաջի աստուածային սեղանոյս եւ աստուածընկալ սուրբ նշանացս, ես (այս անուն) վարդապետ, միաբան ուխտին (այս անուն) եւ Առաջնորդ վիճակի (այս անուն գաւառի կամ քաղաքի), ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ խղճի մտացս եւ սրտիս երդնում զերդումն սուրբ ըստ առաջիկայ պայմանացս.*

*«Նախ, անխոտոր եւ անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ եւ պատուիրանաց Հայաստանեայցս Առաքելական սուրբ Եկեղեցւոյ, զոր հաստատեաց Աստուած ի ձեռն սրբոց առաքելոցն իւրոց Թադէոսի եւ Բարթուղիմէոսի. այլ եւ ի գնացս իմ անստերիւր հետեւել վարուց եւ գործոց Հարցն ուղղափառաց՝ որք փայլեցին իմաստութեամբ եւ շնորհօք Հոգւոյն սրբոյ յազգիս մերում, յիշատակ բարեաց եղեն եւ փառաւորին արժանապէս յԵկեղեցւոջ Հայաստանեայցս. ի բացատրութեան իմաստից սրբոյ Աւետարանին չխոտորել երբէք ի շաւղաց նոցա, եւ յարարողութիւնս ծիսից եւ պաշտամանց Քրիստոսական կրօնիս վարել միշտ ըստ Մաշտոցին որ սահմանեալ է ի մերում Եկեղեցւոջ, եւ ըստ կարգացն եւ կանոնաց՝ որ գրով կամ աւանդութեամբ յառաջնոց անտի Հարցն հասեալք են առ մեզ, խորշելով յօտարոտի եւ յեկամուտ նորաձեւութեանց.*

*«Երկրորդ, խոստանամ եւ ուխտեմ չլինել երբէք օրինազանց կամ արհամարհող կարգաց Եկեղեցւոյ, այլ եւ հանապազ խրատել զժողովուրդս յանձնեալս ի խնամս իմ, ուսուցանել եւ յորդորել զնոսա ի պահպանութիւն Աստուածային եւ Եկեղեցական օրինաց, եւ ի հնազանդութիւն Հոգեւոր իշխանութեան. եւ առհասարակ ըստ անհրաժեշտ պարտուց կոչման իմոյ եւ աստիճանի՝ զկամս իմ եւ զխորհուրդս եւ զզօրութիւն մտաց եւ ջանից իմոց ուղղել յօգուտ եւ*

ի փրկութիւն հոգւոց ժողովրդեան իմոյ. այլեւ ոչ երբէք վատնել յումեքէտ զարդիւնս ժողովրդեան զնուիրեալս յանուն Աստուծոյ եւ ի նպաստ Եկեղեցեաց սրբոց։

« Երրորդ, խոստանամ եւ ուխտեմ հաւատարիմ լինել սրբոյ Էջմիածնի մինչեւ ցվախճան կենաց իմոց, եւ կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան եւ հրամանաց սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս, յորում ընտրութեամբ Հոգւոյն սրբոյ անդրսաւին յառաքելոցն սրբոց ի նախկին Լուսաւորչաց Հայաստան աշխարհիս եւ յօրինաւոր յաջորդէ նոցին ի սրբոյն Գրիգորէ առաքելաշաւիղ Հայրապետէ մերմէ, անընդհատ դասաւորութեամբ եւ ուղիղ յաջորդութեամբ բազմեալ կայ այսօր Տէր (Գէորգ Դ.) Կաթուղիկոս ամենայն Հայոց, եւ օրինաւոր Յաջորդաց նորին, յարգելով եւ կատարելով զամենայն զհրամանս որ ի սրբոյ Աթոռոյ աստի ի վերայ իմ դնիցին. ոչ երբէք ի կողմն եւանել այլոցն Կաթուղիկոսական անուանեալ անվաւեր աթոռոց, որք հեստեալ կան մինչեւ ցայսօր ի միոյ միայնոյ երեւելի Գլխոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ ի Սիս եւ յԱղթամար. այլ մանաւանդ հոգ ի մտի դնել միշտ ի մի միաբանութիւն ժողովել զհամօրէն որդիս սրբոյ Լուսաւորչին ընդ միով իշխանութեամբ Յաջորդաց սրբոյ Աթոռոյս։

« Չորրորդ, խոստանամ եւ ուխտեմ կալ մնալ ցվախճան կենաց իմոց անդամ եւ միաբան սրբոյ ուխտիս որ ի Վաղարշապատ, եւ ծառայել երկիւղիւ Տեառն յօգուտ եւ ի փառս անուան սրբոյ Էջմիածնի, սատար լինելով իմովսանն ջանիւք յառաջադէմ զարգացման եւ պայծառութեան սորին յամենայնի։

« Հինգերորդ, խոստանամ եւ ուխտեմ ոչ բնաւ անցանել անդր քան զսահման իշխանութեանն զոր տացէ ինձ Աստուած ի ձեռնադրութենէ իմմէ յեպիսկոպոսութիւն ի վերայ (այս ինչ) վիճակի (կամ քաղաքի), ոչ կրիւք կամ ցանկութեամբ իրաց աշխարհիս զանց առնել զկանոնօք Եկեղեցւոյ՝ փոփոխելով յիմմէ վիճակէս յայլ ինչ վիճակ. ոչ ձեռնադրել աչառութեամբ կամ կաշառօք ի քահանայութիւն կամ ի սարկաւագութիւն զազէտս եւ զանարժանս, այլեւ ոչ երբէք ձեռնադրել զոք յայլմէ վիճակէ՝ առանց խնդրանաց առաջնորդի եւ ժողովրդեան տեղւոյն։

« Վեցերորդ, քանզի ուխտեալ եմ մնալ մինչեւ ցվախճան կենաց իմոց Առաջնորդ (այս ինչ) վիճակի (կամ քաղաքի) յորոյ վերայ հանդերձեալ եմ առնուլ զձեռնադրութիւն, եւ ոչ զակն դնել այլում վիճակի՝ որ արդիւնաւոր թուիցի կամ բարձրագոյն քան զիմն, խոստանամ զի ի դիպել անակընկալ պատահարաց եւ հարկելոյ իմոյ հեռանալ ի վիճակէն՝ յորոյ վերայ ձեռնադրեցայց օծութեամբ եւ կնքով սրբոյ Հոգւոյն, դարձ արարից այսրէն առ ոտս սրբոյ Հայրապետիս իմոյ եւ կացից աստէն միաբանութեամբ յուխտի վանացս սրբոյ Էջմիածնի, յոր վաղու եւս միաբանեալ եմ սրտիւ եւ ըղձիւք ի ձեռնադրութեանս իմում յերիցութիւն։

« Զայսոսիկ խոստմունս զորս խոստանամ եւ զոր ունիմ ուխտել յաւուր ձեռնադրութեան իմոյ յառաջիկայութեան իններակ դասակարգութեանց սրբոյ Եկեղեցւոյ եւ բազմութեան ժողովրդոց, եթէ կամակար միտօք եւ կամ թեւլադրութեամբ կրից առ ոտն հարկանիցեմ, պարտաւոր եղէց առաջի անխաբ Դատաւորին Աստուծոյ եւ առաջի Սրբազնագոյն Հայրապետին ամենայն Հայոց Հոգեւոր Տեառն մերոյ։ Առ այս վկայ հաւատարիմ կոչեմ ինձ զսրբութիւնս աստուածային խորանիս եւ զլսողս ուխտադիր երդմանս իմոյ. յորոյ ի հաստատութիւն ստորագրեմ։ »

Երբ Նորընծայն ի ձեռնադրութեան Եպիսկոպոսութեան՝ ի միաբանից առաջի էջ՝ որ եւ կարգեալ յառաջնորդութեան վիճակի, զերդմնագիրն այսպէս գրեաց:

« Յանուն ամենասուրբ Երրորդութեան եւլն. . . սուրբ նշանացս, ես (այս անուն) Վարդապետ եւ միաբան Մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի՝ ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ խղճի մտացս եւ սրտիս երդնում զերդումն սուրբ ըստ առաջիկայ պայմանաց։

« Նախ, անխոտոր եւ անսայթաք ընթանալ ի վարդապետութեան եւլն։

« Երկրորդ, խոստանամ եւ ուխտեմ չլինել երբէք օրինազանց եւլն։

« Երրորդ, խոստանամ եւ ուխտեմ հաւատարիմ եւլն։

« Չորրորդ, խոստանամ եւ ուխտեմ կալ մնալ եւլն։

« Հինգերորդ, խոստանամ եւ ուխտեմ ոչ բնաւ անցանել անդր քան զսահման իշխանութեան զոր տացէ ինձ Աստուած ի ձեռնադրութենէ իմմէ յեպիսկոպոսութիւն, եւ ոչ կրիւք կամ ցանկութեամբ իրաց աշխարհիս զանց առնել զկանոնօք Եկեղեցւոյ եւ զհրամանաւ Ս. Հայրապետիս։

« Զայսոսիկ խոստմունս զորս խոստանամ եւ զոր ունիմ ուխտել յաւուր ձեռնադրութեան իմոյ եւլն։ »

Եւ յետ ընթերցմանն համբուրեալ զՍ. խաչ և զԱւետարանն որ առաջի կայ՝ և յանձնեալ ստորագրէ ի ներքոյ երդմնագրոյն զանուն իւր, ապա և Եպիսկոպոսունքն՝ որք վկայք եղեն ձեռնադրութեանն՝ ձեռնագրեն ի նմին. և յետ այնորիկ առեալ տանին զընծայեալն առ Հայրապետն, ընդ նմին և զերդմնագիրն: Իսկ Նորա խօսեցեալ առ ընծայեալն բանս ինչ խրատու, առէ զՊատմուճանն՝ և գնան յեկեղեցւոյ տեղին:

# ԿՈՉՈՒՄՆ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաւուրն յորում կոչի Հայրապետն ձեռնադրելիք յԵպիսկոպոսութիւն, յերեկոյէ հսկումն առնեն, և յետ երկուց ժամուց անցանելոյ զկնի գիշերային ժամերգութեան՝ ամենայն ուխտ եկեղեցւոյն հանդերձ եպիսկոպոսօք և այլովք պաշտօնէիւք մտանեն ի Սուրբ Գէորգեան պահարանն տաճարին, և զգեստաւորին ըստ իւրաքանչիւր աստիճանի: Մի ոմն յԵպիսկոպոսաց զգենու զգեստ խաչակալի, որ է շապիկ մետաքսեայ սպիտակ պայծառ, փորուրար, գօտի ընդ մէջ, և բազպան յաջ բազուկն, և սաղաւարտ ի գլուխ: Իսկ Նուիրեալն զգենու զգեստ քահանայական: Յետ կոյս հարաւային դրան պատրաստ գտանին և երկու իշխանք և երկու աղքատք՝ ունելով մոմեղէնս ի ձեռին:

Յորժամ ամենեքեան հանդերձին, գայ Հայրապետն, և մտանէ ի ներքին կողմն պահարանին և զգենու զՀայրապետական զգեստն ամենայն զարդուք: Յայնժամ ի ձայն հնչման զանգակաց՝ սկսանին ելանել ի պահարանէ անտի թափօրիւ ըստ այսմ կարգի:

Նախ յառաջեն դպիրքն՝ որք երգեն ճանր եղանակաւ զ*Խորհուրդ խորին*:

Յետ նոցա խաչն մեծ և խաչվառք և լապտերք:

Ապա Սաղմոսասացք՝ զգեցեալ շապիկս սպիտակս, ունելով գօտի ընդ մէջս, և ի ձեռին Սաղմոսարան:

Զհետ նոցա Դռնապանքն՝ զգեցեալք շապիկ սպիտակ՝ բայց գօտելոյծ, և ունիցին ի ձեռս զբանալին և զժամահարն կամ զզանգակ:

Զկնի նոցա Դպրակարդացք կամ ընթերցողք, որք ունիցին շապիկ ծիրանի, և ի ձեռս զգիրս մարգարէից:

Զկնի նոցա Երդմնեցուցիչք՝ զգեցեալք շապիկս ի ծաղկեայ դիպակէ, և ունիցին ի ձեռս զՄաշտոցն Մկրտութեան:

Զհետ նոցա Ջահընկալքն՝ զգեցեալք շապիկ կարմիր, և ի ձեռս ունին զաշտանակս վառեալ մոմեղինօք, զբաժկանոցն և զսրուակն ջրոյ տաշտակս և զկնիք լուացման, և զտաշտակն կամ զդենջակ զսրուակ արկեալ:

Զհետ նոցա Կիսասարկաւագունքն՝ զգեցեալք շապիկ դիպակ նեղթեզանի, և ուրար ի բազուկն. և ունին ի գիրկս իւրեանց զԱռաքելական գիրս և զԽորհրդատետրս, և ի ձեռին ունիցին տապարս հանդերձ մաղզմայիւք:

Զկնի նոցա Սարկաւագունք, որք ունին զշապիկ դեղնագոյն, ուրար զահեալ ուսովքն, զԱւետարան ի գիրկս և զբուրվառս ի ձեռին:

Զհետ նոցա Քահանայքն, զգեցեալ զգեստ քահանայական, բարձեալ ի ձեռս իւրեանց զմասնատուփն հանդերձ տէրունական մարմնովն՝ ծածկեալ:

Զկնի նոցա Քահանայապետքն, որք են Եպիսկոպոսունք, զգեցեալ զգեստ եպիսկոպոսական, ունելով ի ձեռին զգաւազան:

Զհետ նոցա յառաջեցեն երկու զոյգ կերոնակիր Դպրաց, ապա Վարդապետք երկու՝ արկեալք զուրջառս ի կարմրագոյն դիպակէ,

ունելով ի ձեռս՝ մին զՀայրապետական Խաչն, և միւսն զԳաւազանն։ Այս Բուրվառակիր Սարկաւագունք կարք՝ զգեցեալք շապիկս մետաքսեայս ազնուականս, ունելով ուրար երկայն արկեալ ի ձախոյ ուսն և պատեալ ընդ անձով աջոյ զձախոյ ուսովն, որք յառաջէն յետոյ յետս գնալով և խնկարկելով զՏէր նոյն երկու սարկաւագունք տանէն յառաջոյ զԽօղն Հայրապետական։

Այս Հայրապետն իւրովք պաշտօնէիւք, և զինի նորա խորտաւիկան և քշոցակիրք կարք։ Յետ ամենեցուն գայ Նուիրեալն։

Իսկ ընդ այս կարգի գնալով ընդ կողմ հարաւոյ մինչև հասանէն առաջի ատենճանայ սեղանոյ սրբոյն Յովհաննու Մկրտչի, և անդ շարակարգին՝ զերեսս ընդ հիւսիս ունելով. Իսկ Դպիրքն՝ Եպիսկոպոսունք և Հայրապետն հանդերձ բուրվառակիր Սարկաւագօք՝ Խաչվառիւք՝ մոմեղինօք՝ և այլն, գնան մինչև հասանէն առաջի սեղանոյ Իջման տեղւոյն, ուր դպիրքն երգեն զՇարականն «*Հրաշափառ Աստուած*»։ Այս Հայրապետն լուանայ զձեռս և առէ զՄեղայն, և երկոցունցն յԱրքեպիսկոպոսաց զ*Ողորմեսցին*։ Իսկ յասել Սարկաւագաց տուն առ տուն զՍաղմոսն՝ *Դատ արա ինձ Աստուած*, գնայ Եպիսկոպոսապետն պաշտօնէիւն իւրովք՝ ի հիւսիս՝ և ելանէ ի սեղան սրբոյն Ստեփաննոսի ի դնել զպաս խորհրդոյ Պատարագին. Իսկ Եպիսկոպոսունքն երթեալ ի հարաւ՝ ելանէն ի բեմ սեղանոյ սրբոյն Յովհաննու։

Յետ աւարտման *Ընտրեալն* և դնելոյ զպաս խորհրդոյն՝ բանի վարագոյրն, Դպիրքն երգեն Շարական ԴԿ. *Հովիւ քաջ բանաւոր հօտի*, և Հայրապետն խնկարկէ ի բեմ անդի սեղանոյն և ժողովրդեան, և ապա բազմի յաթոռն՝ որ հայի ընդ հիւսիս, և ընդ նմին սփռեալ գտանի կապերտ (խալիչայ) Բազմեալ Ծիրանեգոյն, յորոյ վերոյ նկարեալ ոսկեթել արծիւ մի Թևատարած։

Իսկ ի վճարել շարականին՝ յառաջ մատուցեալ խորտաւիկան կանգնի ի մէջ ատենի հանդիսին և առէ բարձր ձայնիւ.

*Շնորհազարդ սուրբ Հայրապետ։*

*Այս ինչ յայտնի լիցի մեծի Տէրութեան քում, զի միաբանք մեծի սրբոյ եւ Առաքելական Աթոռոյս Էջմիածնի, համօրէն ուխտիւս, այս ինքն Եպիսկոպոսունք, Քահանայք, Սարկաւագունք, Կիսասարկաւագունք, Ջահընկալք, Երդմնեցուցիչք, Ընթերցողք, Դռնապանք եւ Սաղմոսասացք, այլ եւ Իշխանք եւ Ազատք, խնդիր ունիմք ի բարձրագահ Տէրութենէդ. վասն որոյ հայցեմք աղաչանօք՝ զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո եւ բացայայտել զխնդիր մեր։*

Ասէ Հայրապետն.

***Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մատչել և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել մեզ զոր ինչ խնդրէքդ։***

Ելանէ խորտաւիկն ի բեմ, և կացեալ առընթեր Հայրապետին՝ զդէմս դէպ ի հարաւ ունելով՝ առէ բարձր ձայնիւ.

*Հրամայեցէք Սաղմոսասացք։*

Իջանեն երկու նախասարկաւագունք բուրվառակիրք, և գնացեալ բերեն զՍաղմոսասացն՝ պաշտելով ընդ նոսին զ*Սուրբ Աստուածն*։

Չափ. կամ Ծանր.

Սու րբ Աս տուա -

ծ սու րբ ե ւ Հզ օր գօ-

ր, սու րբ ե ւ ա ն

մահ, որ խա չե ցա ր

վա սր ն մեր, ո ղո -

ր մեա մեզ:

Եւ նոքա երթեալ դնեն զերկոսին զՅետս խորանոյն յառաջին աստիճանն, և խոնարհեալ երկրպագանեն: Եւ ձայնէ աւագ Սարկաւագն. — Ծանր.

Օ րհ նեա

տէ ր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիովնէ՝ այն որ բնակեալն է Երուսաղէմ:**

Դպիրքն. — Ծանր.

Ա մէ ն:

Եւ Սաղմոսասացքն յորժամ կացեալ և երգեալ կանգնին երկուսեան առ աստիճանօքն հանդէպ միմեանց:

Խորհրդականն ձայնէ.

*Հրամայեցէ՛ք Դռնապա՛նք:*

Սարկաւագունքն գնան դարձեալ և բերեն և դնեն՝ պատրելով զՍուրբ Աստուածն՝ որպէս է վերոյ. և նոքա ըստ օրինակի առաջնոյն գան և երկրպագանեն:

Աւագ Սարկաւագն եղանակէ. — Ծանր.

Օ րհ նեա

տէ ր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Օրհնեսցէ զձեզ Տէր այնու օրհնութեամբ՝ որ ոչ անցանէ:**

Սարկաւագունքն. — Չափաւոր.

Ե ղի ցի ե ղի-

ցի :

Եւ Դռնապանքն յորժամ կացեալ կանգնին առընթեր Սաղմոսասացացն նոյնպէս հանդէպ միմեանց:

Խորհրդականն ձայնէ.

*Հրամայեցէ՛ք Ընթերցո՛ղք:*

Սարկաւագունքն գնան և բերեն՝ պատրելով զՍուրբ Աստուածն: Եւ նոքա գան և առնեն որպէս արարին Դռնապանքն:

Առաջ Սարկաւագն եղանակէ.

Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Տէր պահեսցէ զձեզ յամենայն չարէ. պահեսցէ Տէր զանձինս ձեր:**

Դպիրքն եղանակեն. Ամէն:

Իսկ Ընթերցողքն գնացեալ կանգնին առընթեր Դռնապանացն:

Խորհրդականն.

Հրամայեցէ՛ք Երդմնեցուցիչք:

Իսկ նոքա գան պաշտելով զՍուրբ Աստուածն ըստ առաջնոյն օրինակի, և առնեն որպէս առաջին Ընթերցողքն:

Առաջ Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Հոգին սուրբ և բարի առաջնորդեսցէ զձեզ ի յերկիր ուղիղ:**

Սարկաւագունքն. Եղիցի՛ եղիցի:

Գնան և նոքա՝ և կանգնին առընթեր Ընթերցողացն:

Խորհրդականն.

Հրամայեցէ՛ք Ջահընկալք:

Իսկ նոքա գան պաշտելով զՍուրբ Աստուածն ըստ առաջնոյն, և առնեն որպէս առաջին Երդմնեցուցիչքն:

Առաջ Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Լուսաւորեսցէ Տէր զաչս մտաց ձերոց, և առաջնորդեսցէ ձեզ ի գործս բարիս:**

Դպիրքն. Ամէն:

Գնան և նոքա՝ և կանգնին առընթեր Երդմնեցուցչացն:

Խորհրդականն.

Հրամայեցէ՛ք Կիսասարկաւագունք:

Իսկ նոքա գան պաշտելով զՍուրբ Աստուածն, և առնեն որպէս առաջին Ջահընկալքն:

Առաջ Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և ասէ.

**Տէր պահեսցէ զմուտ և զել ձեր յայսմ հետէ մինչև յաւիտեան:**

Սարկաւագունքն. Եղիցի՛ եղիցի:

Գնան և նոքա՝ և կանգնին առընթեր Ջահընկալացն:

Խորհրդականն.

Հրամայեցէ՛ք Սարկաւագունք:

Իսկ նոքա գան պաշտելով զՍուրբ Աստուածն, և առնեն որպէս առաջին Կիսասարկաւագունքն:

Առաջ Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և առէ.

**Տէր Աստուած ողորմեսցի ձեզ, երևեսցուսցէ զերեսս իւր ի ձեզ՝ և կեցուսցէ զձեզ:**

Դպիրքն. Ամէն:

Զնոյն և սոքա՝ և կանգնին առընթեր Կի-սասարկաւագացն:

Քարտուղարն.
Հրամայեցէք Քահանայք:

Եւ նոքա գան պաշտելով զՍուրբ Աս-տուածն, և առնեն որպէս Սարկաւագունքն արարին:

Աւագ Սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և առէ.

**Առաքեսցէ ձեզ Տէր զօգ-նութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի Սիոնէ ընկալցի զձեզ:**

Սարկաւագունքն. Եղիցի եղիցի:

Զնոյն և նոքա՝ և կանգնին առընթեր Սար-կաւագացն:

Քարտուղարն.
Հրամայեցէք Եպիսկոպոսունք:

Եւ նոքա գան պաշտելով զՍուրբ Աս-տուածն, և խոնարհեցուցեալ զգլուխ՝ կանգնին առ աստիճանօքն:

Աւագ Սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և առէ.

**Յիշեսցէ Տէր զամենայն ըն-պատարագս ձեր, և զուխտս ձեր ընդունելի արասցէ:**

Դպիրքն. Ամէն:

Եւ Եպիսկոպոսունքն եկեալ ընդ աս-տիճանն ի վեր՝ և նստին յաջմէ և յահեկէ Հայրապետին:

Քարտուղարն. Հրամայեցէք Իշխանք:

Եւ նոքա գան պաշտելով զՍուրբ Աս-տուածն ըստ առաջնոյն, և երկրպագեն:

Աւագ Սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և առէ.

**Տացէ ձեզ Տէր ըստ սրտի ձերում, և զամենայն խորհուր-դս ձեր նա կատարեսցէ:**

Սարկաւագունքն. Եղիցի եղիցի:

Եւ նոքա գնացեալ կանգնին ըստ կար-գին:

Քարտուղարն. Հրամայեցէք Ազգայինք:

Եւ նոքա գան պաշտելով զՍուրբ Աս-տուածն, և առնեն որպէս արարին Իշխանք:

Աւագ Սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն խաչակնքէ ի վերայ նոցա և առէ.

**Փրկեա Տէր զժողովուրդս քո՝ և օրհնեա զժառանգու-**

թիւնս քո. հովուեա և բարձրացո զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան:

Դպիրքն. Ամէն:

Դնեն և կանգնեն առընթեր Խորանոյ:

Ապա խաչվառակալքն կալեալ ի ձեռն՝ և երկու քահանայք Սարկաւագունքն ընդ նմա՝ երթան ի կողմն հարաւոյ առ ընծայեալն՝ որ ի ծունկս կայցէ:

Խաչվառակալքն նոյնպէս յառաջոյ նորընծային ծունր եդեալ երեսն դէպ ի հիւսիս՝ և ասէ քահանայն ձայնիւ. — Ծանր.

Հրա մայեա տէ
ր օրհնութեա մբ
ա սե լ:

Ասէ Հայրապետն.

Արարիչն երկնային պահեսցէ զմեզ և նախախնամեսցէ՝ և վերակացու լիցի մեզ:

Սարկաւագունքն. Եղիցի եղիցի:

Յառաջ գան առաջի մի խաչվառակալքն և Սարկաւագունք՝ և զնի նոյա նորընծայն ի ծունկս՝ պաշտելով զՍուրբ Աստուածն:

Եւ խաչվառակալքն ծունր դնէ և ասէ.

Հրամայեա Տէր օրհնութեամբ ասել:

Ասէ Հայրապետն.

Տէր պահեսցէ զմիաբանութիւնս մեր յամենայն չարէ, և ուղղեսցէ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան և փրկութեան:

Դպիրքն. Ամէն:

Նոյնպէս առաջի մի և յառաջ մատչին պաշտելով զՍուրբ Աստուածն, և Խաչվառակալքն մնացեալ ի ծունկս եղեալ եղանակէ.

Հրամայեա Տէր օրհնութեամբ ասել:

Ասէ Հայրապետն.

Զօրութիւնն երկնային տացէ մեզ՝ որ նստին յերկինս:

Սարկաւագունքն. Եղիցի եղիցի:

Եւ դարձեալ պաշտելով զՍուրբ Աստուածն՝ գան առաջի մի յառաջ, և Խաչվառակալքն դարձեալ ի ծունկս ասէ.

Հրամայեա Տէր օրհնութեամբ ասել:

Հայրապետն խաչակնքէ և ասէ.

Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն Աստուծոյ մերոյ կոչեմ զնուիրեալդ առ իս, որ եկեալ կոխեսցէ զառաջին աստիճանն:

Հանեն զնորընծայն յառաջին աստիճանն, ուր կայ նա ի ծունկս, և Խաչվառակալքն ելանէ ի ձեռն և կանգնի առընթեր Հայրապետին:

Հարցանէ Հայրապետն ասելով.

Եղբարք, արդարութեամբ է դատելդ ձեր:

Ասէ Քարտուղարն.

Մեք դատիմք եւ խնդրեմք՝ զի Աստուած, եւ Հայրդ մեր տացէ մեզ զեղբայրս մեր առաջնորդ եւ հովիւ։

Հարցանէ Հայրապետն.

Զի՞նչ պատիւ ունի։

Քարտուղարն պատասխանէ.

Քահանայութեան։

Հարցանէ Հայրապետն.

Քանի՞ ամս ունի ի քահանայութեանն։

Պատասխանէ Քարտուղարն.

Տասն (աւելի կամ պակաս)։

Հարցանէ Հայրապետն.

Ունեա՞լ է զպսակ ամուսնութեան։

Պատասխանէ Քարտուղարն ժողովին։

Հարցանէ Հայրապետն.

Զի՞նչ կարծէք զդմանէ։

Պատասխանէ Քարտուղարն.

Սրբութեամբ պահեալ է զանձն իւր ի մեղաց՝ եւ խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ համբերութեամբ գնացեալ յամենայնի ըստ կամացն Աստուծոյ։

Հարցանէ Հայրապետն.

Ունի՞ թուղթս վկայութեան յիւրմէ վիճակէն։

Քարտուղարն պատասխանէ.

Այո՛ ունի։

Ասէ Հայրապետն ցՔարտուղարն.

Ընթերցի՛ր։

Ընթեռնու ի յայն.

Ձնորհազարդ սուրբ Հայրապետ, որ կաս յիշխանութեան Առաքելական Աթոռոյդ Թադէոսի եւ Բարթուղիմէոսի Առաքելոցն, եւ երջանիկ Հօրն մերոյ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, երկրպագեմք քեզ ամենայն պաշտօնեայքս (այս անուն վանից - եւ կամ վիճակի) Քահանայք եւ համօրէն ուխտ եկեղեցւոյ եւ իշխանք եւ ժողովուրդք։ Մի՛ լիցի ծածկեալ ի քումմէ մեծութենէդ վասն մերոյ Եկեղեցւոյն՝ զի առանց հովուի է, բայց զքեզ ունելով՝ ոչ ինչ վշտանամք։ Արդ՝ զի մի՛ յափշտակիցի ի թշնամւոյն ժողովուրդս Աստուծոյ, աղաչեմք զքեզ օգնական լինել մեզ վասն չարին՝ որ փութայ գայթակղեցուցանել զմարդիկ. եւ զոր ընտրեաց ժողովս մեր ամենեցուն (զայս անուն Քահանայ) ի մերմէ Եկեղեցւոյս՝ կարգել մեզ Եպիսկոպոս։ Քանզի այր է պատուական, բարի եւ իմաստուն եւ վարժեալ հանճարով, մաքուր եւ զգաստ եւ հեզ ըստ կամացն Աստուծոյ եւ մեր ամենեցուն. վասն որոյ եւ առաքեցաք զդա առաջի մեծանձնութեան քում, եւ միաբանութեամբ սրտիւ խնդրեմք ամենեքեան՝ կարգել զդա քո սուրբ ձեռնադրութեամբդ եւ պատկերաւդ Եպիսկոպոս մերոյս վիճակի. եւ Տէր՝ որ արարողն է եւ է ընդ մեզ որպէս զհայր բարեգութ,

կարող է զօրացուցանել զդա, եւ ընդ իւրով նախախնամութեամբն ի ձեռն դորին պահել զմեզ: Այլ եւ զի գիտասցես Տէրդ մեր, զի ամենեցուն մեր ժողովս միաձայն խնդրեն զդա առաջնորդ:

Իսկ եթէ ընծայեալն իցէ ի միաբանից սրբոյ Աթոռոյս, խորհրդականն ընթերցանում զայս յետ.

Շնորհազարդ սուրբ Հայրապետ, որ կաս յիշխանութեան Առաքելական Աթոռոյս. երկրպագեմք քեզ համօրէն ուխտ Եկեղեցւոյս եւ միաբանք սրբոյ Աթոռոյս, եւ աղաչեմք զքեզ օգնական լինել տկարութեանս մերում: Քանզի (այս անուն աբեղայ - կամ վարդապետ) այր է բարի եւ իմաստուն՝ վարժեալ համեստ, անբիծ եւ զգաստ եւ հեզ ըստ կամացն Աստուծոյ: Վասն որոյ ահա կացուցաք զդա առաջի մեծանձնութեան քոյ, եւ միաբանութեամբ սրտիւ խնդրեմք կարգել զդա քո սուրբ ձեռնադրութեամբդ եւ պատկերաւդ Եպիսկոպոս ի պաշտօնատարութիւն սրբոյ Աթոռոյս եւ յօգնութիւն եղբայրութեան խնդրողացս: Եւ Տէրն մեր եւ արարողն, որ ընդ մեզ է որպէս զհայր բարեգութ, զօրացուսցէ զդա եւ պահպանեսցէ ի ճշմարտութիւն ուխտադրութեան անձին իւրոյ եւ մեր ամենեցուն:

Ասէ Հայրապետն.

Որովհետեւ այդպէս է՝ ածէք զդա յերկրորդ աստիճանն:

Հարցանէ Հայրապետն.

Եղբայր ճշմարտութեամբ եկիր յայսքան վաստակս:

Պատասխանէ ընծայեալն.

Տէր՝ չեմ բաւական այսմ շնորհի, սակայն եղբարքն իմ ընտրեցին զիս:

Հարցանէ Հայրապետն.

Գիտես արդեօք թէ յինչ կոչիս:

Պատասխանէ ընծայեալն.

Ուսո զիս՝ տէր:

Ասէ Հայրապետն.

Տես որդեակ և զգոյշ լեր, զի մի՛ ձեռնադրութեամբ քո բազմասցին թիւք քահանայից և կղերիկոսաց աւելի քան զպէտս Եկեղեցւոյդ, և մի՛ երբէք զանարժանս՝ զստրկածինս և զարբեցողս կոչել ի կարգ, և մի՛ պղծելով զձեռս քո կաշառօք՝ զանարժանսն նովաւ յառաջ կոչել ի ձեռնադրութիւն. զգուշացուցանեմք հայել ի քեզ յառնուլն զպատիւս զայս. և մի՛ լիցիս խոստացեալ յանապատական կեանս, զի չէ արժան թողուլ զխոստումն քո և գալ յաստիճանս յայս:

Պատասխանէ ընծայեալն.

Տէր՝ ոչ բնաւ:

Ասէ Հայրապետն.

Զանադիր լեր միշտ, զի ամենայն զօրութեամբ քո և

մտօք պահեսցես զպատուիրանս Աստուծոյ և զկանոնս սուրբ Եկեղեցւոյ ուղղափառութեամբ ըստ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, որով հովուեսցես զԵկեղեցի քո արիապէս, և դատեսցես զժողովուրդ քո անթիւր և անկաշառ ուղղութեամբ. և այց արասցես որբոց և այրեաց և ամենայն վտանգելոց և աղքատաց ժողովրդեան՝ ձեռն տալով ողորմութեան որչափ կարասցես:

Պատասխանի ընծայեալն.

Կամիմ բոլորով սրտիւ՝ եւ ակն ունիմ ի շնորհացն Աստուծոյ եւ օժանդակութեամբ սուրբ աղօթից ձերոց տալ ինձ կարողութիւն ի դոյնն:

Ասէ Հայրապետն.

Որովհետև այդպէս է՝ ածէք զդա յերրորդ աստիճանն:

Ասէ Հայրապետն.

Առաջին կանոն և սահման բարեկարգութեան Հարցն սըրբոց ուսուցանէ զմեզ և հրամայէ, զի զսա որ ընտրեցաւ ի կարգ եպիսկոպոսութեան՝ քըննեսցուք սիրով և քաղցրութեամբ, որպէս զի ազատ լիցի յամենայն ախտից: Նախ՝ ունիցի ուղղափառ հաւատս ի սուրբ Երրորդութիւնն, որպէս արդ իսկ հարցցուք սմա զհաւատոյ խորհրդոց. և յետ այնր՝ բարւոք և օրինաւոր գործովք պահեսցէ զպատիւս զայս, այս ինքն ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնել. ըստ որում գրէ սուրբ առաքեալն, Նախ քան զկարգելն զօք յաստիճան՝ գիտասցէ զարժանաւորութիւն նորա և զիմաստութիւն, զի մի՛ զամօթ կրեսցէ ձեռնադրողն: Եւ արդ պատուիրեմ քեզ՝ որդեա՛կ՝ կարեկից ոգւով և քաղցրութեամբ, զի որչափ կարող իցէ անձն քո՝ ստասցիս զմաքրութիւն և զսըրբութիւն, և պարապումն քեզ արասցես հանապազ զընթերցումն և զկրթութիւն սուրբ գըրոց:

Ասէ Նորընծայն.

Կամիմ բոլորով սրտիւ կատարել զամենայն հրամանս ձեր:

Ասէ Հայրապետն.

Որովհետև այդպէս է՝ ածէք զդա ի չորրորդ աստիճանն:

Հարցանէ Հայրապետն.

Յօժարիս կատարել և ուսուցանել գործով և բանիւ զամենայն ինչ ժողովրդեան քո՝ յորոց վերայ կարգիս՝ որպէս խրատիս ի սուրբ գրոց:

Պատասխանէ.

Այո՛ Տէր՝ կամիմ:

Հարցանէ Հայրապետն.

Խնդրե՞ս դու ուսուցանել և առնել և պատուել զհրամանս մեր և սրբոց Հարց մերոց և Հայրապետաց:

Պատասխանէ ընծայեալն.

Այո՛ կամիմ:

Ասէ Հայրապետն.

Որովհետև այդպէս է՝ ածէ՛ք զդա ի հինգերորդ աստիճանն:

Հարցանէ Հայրապետն.

Խնդրե՞ս թողուլ զքո սովորութիւնդ որ յառաջ, և մաքրիլ, և Աստուծոյ զօրութեամբն ըստ կարողութեան քո փոփոխիլ յամենայն բարիս:

Պատասխանէ ընծայեալն.

Կամիմ յօժարութեամբ:

Հարցանէ Հայրապետն.

Կամի՞ս օգնականութեամբն Աստուծոյ հովուել՝ խնամել և ուսուցանել զհօտն Քրիստոսի:

Պատասխանէ Նորընծեալն. Այո:

Ասէ Հայրապետն.

Որովհետև այդպէս է՝ ածէ՛ք զդա ի վեցերորդ աստիճանն:

Հարցանէ Հայրապետն.

Կամի՞ս մնալ հանապազ ի գործս բարիս և առաքինիս, և հեռի լինել յերկրաւոր տուրևառութեանց և յամենայն աղտեղի շահուց:

Պատասխանէ ընծայեալն.

Այո՛ կամիմ ամենայն յօժարութեամբ:

Հարցանէ Հայրապետն.

Կամի՞ս մնալ խաղաղութեամբ և հեզութեամբ և ժուժկալութեամբ առ քեզ, և ուսուցանել այլոց զսոյն:

Պատասխանէ. Այո՛:

Ասէ Հայրապետն.

Որովհետև այդպէս է՝ ածէ՛ք զդա ի յեօթներորդ աստիճանն:

Հարցանէ Հայրապետն.

Կամի՞ս զլինելն խօսակից աղքատաց յօժարութեամբ՝ և ողորմած ի վերայ տնանկաց և ի վերայ ամենայն կարօտելոց վասն անուանն Աստուծոյ:

Պատասխանէ ընծայեալն. Այո՛ Տէր:

Հարցանէ Հայրապետն.

Կամի՞ս մնալ հնազանդութեամբ ի ներքոյ բարձր իշխա-

նութեան մեծի Աթոռոյս Առաքելոցն Բարթուղիմէոսի և Թադէոսի, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, և յաջորդի նոցին, և այնոցիկ՝ որք զկնի մեր նստցին յԱթոռս յայս. և յոչ հնազանդելն քո յանձն առնո՞ւս նզովս յԱստուծոյ և ի մէնջ:

Պատասխանէ.

Այո՛ յանձն առնում կատարել զհրամանս ձեր, հնազանդելով մեծի Աթոռոյս եւ ձեզ, եւ կալ ի ներքոյ իշխանութեան ձերոյ մինչեւ ի սպառել շընչոյս. իսկ ի հեստելն իմ նզովս ընկալայց յԱստուծոյ եւ ի ձէնջ՝ մինչեւ զղջացայց:

Ասէ Քահանայն.

Որովհետև այդպէս է՝ ածէք զդա այսուհետև ի վերայ արծուոյն ի խորհուրդ բարձրութիւն և երկնագնաց լինելոյ զօրա ի հաճոյսն Աստուծոյ, և ի նշան սրատես մօզք խելամուտ լինելոյ ուխտին իւրում, զի մի՛ մոռասցի զօր խոստմնայն:

Եւ ածեն ի վերայ արծաթոյն ջնջեղէնն և փակեն:

Ասէ Քահանայն.

Արդ զայս ամենայն զոր ինչ տասցի քեզ՝ և զայլ ամենայն բարեգործութեան շնորհս տացէ քեզ Տէր Աստուած, և ինքն շնորհօքն իւրովք զօրացուսցէ զքեզ յամենայն առաքինութիւնս և ի պահպանութիւնս խոստմանց և ուխտադրութեանց քոց, որպէս զի մի՛ գուցէ լինիցիս ուխտազանց և արժանի դատապարտութեան, այլ լինել կատարող յամենայնի և հաւատարիմ ծառայ Քրիստոսի, և արժանաւորիլ վարձուցն մեծաց՝ զոր խոստացեալն է կամարարացն իւրոց:

Եւ որք շուրջն կան ասեն ի միա.

Ամէն:

Քարոզէ Քահանայն.

Հաւատա՞ս դու քոյով իմաստութեամբդ որպէս և լսես՝ ըզսուրբ զԵրրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին՝ մի Աստուած ամենակարող, և զամենայն ինչ որ Աստուածութեան է՝ լինել Երրորդութեանն:

Պատասխանէ Խաչադրեալն ի յայն.

Այո՛ այո՛,

Հաւատամ:

Եւ նորընծայն ([illegible]) ասէ. Հաւատամ ճշմարտութեամբ:

8542

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս դու կատարեալ՝ ամենակարող մի Աստուած ըզսուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, և զնոյն ինքն զԵրրորդութիւնն մի էութիւն, մի կամք՝ և մի զօրութիւն անբաժանելի։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս դու կատարեալ՝ զի Տէրն մեր է արարող ամենայն էից կենդանեաց և մեռելոց։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս դու ճշմարտութեամբ՝ զի ի նմանէ է ստեղծեալ ամենայն ինչ որ յերկինս և որ յերկրի՝ երևելիք և աներևոյթք։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ զսուրբ Երրորդութիւնն յիւրաքանչիւր պատկեր առանձնաւորութեամբ և յատկութեամբ ստուգեալ։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս զնոյն ինքն՝ Որդի և Բան Աստուծոյ։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս դու ճշմարտութեամբ՝ զի է նա ինքն ծնեալ ի Հօրէ անժամանակ։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս՝ զի նոյն ինքն է բնութենակից Հօր և ամենայնիւ հաւասար, և նոյն ինքն ծնաւ Հոգւովն սրբով ի վերայ երկրի։

Պատասխանէ Խոստովանեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս զի նա ինքն ծնաւ ի միշտ կուսէն Մարիամայ մարմնով՝ որ ունի ճշմարտութեամբ զՀոգի բանական։

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս՝ զի ունի նոյն ինքն երկուս ծնունդս, նախ ի Հօրէ անժամանակ, և դարձեալ ի մօրէ ժամանակաւոր:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս՝ զի նոյն ինքն է ճշմարտութեամբ Աստուած՝ և ճշմարտապէս մարդ, և նոյն ինքն է համանգամայն Աստուած և համանգամայն մարդ:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս դու՝ զի այսպէս է ճշմարտութեամբ և ոչ է մոլորութիւն:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս՝ զի նոյն ինքն է միայն որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, մի էութիւն և մի բնութիւն, և այսպէս մի Աստուած:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս ճշմարտութեամբ՝ զի որ Աստուած է անմահ՝ և մարդ եղև վասն մեր:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս՝ զի ճշմարտութեամբ իւր մարմնովն համբերեաց չարչարանացն խաչի և մահու վասն մեր:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս՝ զի եդաւ ի գերեզմանի, և նոյն ինքն յարեաւ ի մեռելոց երեքօրեայ, և ճշմարտապէս նոյն մարմնովն որով և մեռաւ՝ յարեաւ ի մեռելոց՝ և նոյն ինքն յետ յարութեանն եկաց զաւուրս քառասուն ընդ աշակերտսն:

Պատասխանէ ձեռնադրեալն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս ճշմարտութեամբ՝ զի նովին մարմնովն և հոգւովն

համբարձաւ փառօք յերկինս և է ընդ աջմէ Հօր:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ՝ զի է նոյն ինքն յերկինս ընդ աջմէ Հօր:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ՝ զի նոյն ինքն գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս և տալ իւրաքանչիւր ումեք ըստ գործոց բարեաց և չարեաց:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս դու կամաւ և յօժարութեամբ զսուրբ Հոգին ճշմարտութեամբ Աստուած:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ՝ զի առաքի և ելանէ ի Հօրէ:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ՝ զի հաւասար է Հօր և Որդւոյ՝ և ամենակարող, և նոյն ինքն անժամանակ և յաւիտենական:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս զերրորդութիւնն մի Աստուած ամենակարող՝ ամենազօր՝ անժամանակ, և ոչ են երեք աստուածք, այլ մի Աստուած անփոփոխելի:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամս ճշմարտութեամբ ի սուրբ Եկեղեցի՝ որ է արդարև կաթուղիկէ Առաքելական:

Պատասխանէ ժողովուրդն.

Հաւատամ:

Հարցանէ Հայրապետն.

Հաւատամ՝ զի սոյն Եկեղեցւոյ է պարգևեալ մկրտութիւն ի թողութիւն ամենայն մեղաց, հաւատամս բոլորովին:

Պատասխանէ ընտրեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս ճշմարտութեամբ՝ եթէ յառնես ի մեռելոց այդ մարմնովդ զոր ունիս, որպէս և Քրիստոս յարեաւ իւր մարմնովն։

Պատասխանէ ընտրեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Հաւատա՞ս և ի յաւիտենական կեանս։

Պատասխանէ ընտրեալն.

Հաւատամ։

Հարցանէ Հայրապետն.

Աշակերտե՞ս հին և նոր կտակարանացն՝ որք ի Հոգւոյն սրբոյ շնորհեցան ի ձեռն մարգարէից և առաքելոց, և ուխտե՞ս այնու միայն հովուել զժողովուրդն քո, և զնոյն ուսանել և ուսուցանել յամենայն ի կեանս քո. որք են՝ Ծնունդք, Ելք, Ղևտական, Թիւք, Երկրորդ Օրէնք, Յեսու, Դատաւորք, Հռութ, Չորս Թագաւորութիւնքն, Երկու Մնացորդքն, Յոբ, Սողոմոն, Դաւիթ, մարգարէքն՝ Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, և երկոտասան մարգարէք։ Եւ Նոր կտակարանքն, որ է Աւետարանն սուրբ՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու, չորեքտասան Թուղթք Պօղոսի, Գործք Առաքելոց, եօթանեքին Թուղթք կաթուղիկեայք և Յայտնութիւն Յովհաննու։

Նորընծայն ասէ.

Խոստովանիմ եւ ուխտեմ աշակերտիլ եւ հետեւել միշտ այդոցիկ սուրբ գրոց Աստուծոյ, եւ զնոյնս ուսանել եւ ուսուցանել, եւ ոչ այլ ինչ որ հակառակ իցէ նոցին ճշմարտութեանն։

Հարցանէ Հայրապետն.

Աշակերտե՞ս Նիկիոյ սուրբ ժողովոյն երեքհարիւր ութուտասն Հայրապետաց, Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն հարիւր յիսուն Հայրապետաց, և Եփեսոսի սուրբ ժողովոյն երկերիւր Հայրապետաց։

Դպիրքն ասեն. — Ձայնը.

Չափաւոր.



Նորընծայն (առ մէն մի ի հարցմանցդ ասէ միով ձայնիւ). Աշակերտիմ եւ հետեւիմ:

Հարցանէ Հայրապետն.

Աշակերտի՞ս սրբոց երկոտասան վարդապետացն Եկեղեցւոյ, Դիոնեսիոսի Արիսպագացւոյն եւ որոց ընդ նմա:

Դպիրքն եղանակեն.

Յաւիտենակա՛ն յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հարցանէ Հայրապետն.

Աշակերտի՞ս սրբոց Հարցն մերոց եւ Հայրապետաց, Գրիգորի Լուսաւորչին եւ որդւոց եւ թոռանց նորին՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի, եւ մեծին Ներսիսի:

Դպիրքն եղանակեն.

Յաւիտենակա՛ն յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հարցանէ Հայրապետն.

Աշակերտի՞ս սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովպայ, եւ Մովսիսի, եւ ամենայն սուրբ եւ ուղղափառ Վարդապետաց մերոց՝ որք ուղիղ համառօտեն զբանն ճշմարտութեան:

Դպիրքն ասեն.

Յաւիտենակա՛ն յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Ասէ Հայրապետն.

Այս հաւատքս ախեսցին ի քեզ ճշմարտութեամբն Աստուծոյ եւ բարութեամբ՝ աստ եւ յանանց կեանսն:

Ասեն Սարկաւագունք. Եղիցի՛ եղիցի:

Հարցանէ Հայրապետն.

Նզովե՞ս զԱրիոս, զՄակեդոն, զՆեստոր եւ զամենայն հետեւողս նոցին:

Դպիրքն ասեն. — Չափաւոր.




Նորընծայն (առ մէն մի ի հարցմանցն ասէ միով ձայնիւ). Նզովեալ եղիցին:

Հարցանէ Հայրապետն.

Նզովե՞ս զՄանի, զՄարկիոն, զՎաղենտիանոս, զՍաբէլ եւ զհետեւողս նոցին:

Դպիրքն. Նզովեա՛լ եղիցին:

Հարցանէ Հայրապետն.

Նզովե՞ս զԱրտեմոն, զԼչնոմիոս, զԼչւտիքէս եւ զամենայն հետեւողս նոցին:

Դպիրքն. Նզովեալ եղիցին:

Հարցանէ Հայրապետն.

Նզովեմս միահամուռ զամենայն հերձուածողս և հերետիկոսս և զաղանդաւորս՝ որք ընդդէմ խօսեցան ճշմարտութեան, և են արբանեակք չարին:

Դպիրքն. Նզովեալ եղիցին:

Ասէ Հայրապետն.

Նզովեալ եղիցին ամենայն դասք հերեսիովտաց և աղանդաւորաց ի Հօրէ և յՈրդւոյ և ի Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից:

Սարկաւագունքն. Եղիցի եղիցի:

Աւագ սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն ասէ զաղօթս.

Ամենակարող Աստուած՝ խոնարհեա՛ց յերկրպագութիւնս մեր և ի գործս զոր կատարելոց է մերս նուաստութիւն, և կատարեա՛ զսա ի պատիւ փառաց քոց՝ շնորհօք Միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ:

Առեալ խաչափառելակիցն զեմիփորոնն ի յետոյ խոր՝ ասէ ի Մեծ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո եւ ողորմեա:

Հայրապետն խաչակնքելով ասէ.

## Օրհնութիւն և փառք Հօր:

Եւ յաւել Սարկաւագաց փոխն առ փոխն զսաղմոսն ՁԴ, Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից ՁԸ, հանեն զեմիփորոնն:

Ապա քարոզէ Աւագ Սարկաւագն.

Աղաչեսցուք ամենեքեան զՏէր, որպէս զի զընծայեալս եւ գյառաջ կոչեցեալս ի վերակացութիւն Եկեղեցւոյ՝ բարերարութիւն ամենակարողին Աստուծոյ ընկալցի, եւ տացէ սմա զառատութիւն շնորհաց իւրոց: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի:

Երգէք Տէր ողորմեա:

Եւ Հայրապետն դնելով զաջն ի վերայ նորընծային ասէ զաղօթս.

Տէր Աստուած մեր, որ սահմանեցեր մեզ յաստիճանս և ի դասս և ի կարգս պաշտել և սպասաւորել սրբոյ Եկեղեցւոյ Քո և անարատ խորհրդոցն. դու նոյն ինքն Տէր ամենեցուն, ըզհրաւիրեալս և զարժանացեալս մտանել յաւետարանական ի լուծ քո և ի քահանայապետական իշխանութիւն՝ ի ձեռն իմ մեղաւորիս, և պաշտօնակից Եպիսկոպոսացս, զօրացո զսա փըչմամբ սուրբ Հոգւոյդ, որպէս զօրացուցեր զսուրբ զառաքեալսն և զմարգարէս, օծեր զթագաւորս, սրբեցեր զքահանայապե-

տըս, և զ.քահանայագործութիւն նոցին անարատ փայլեցուցեր: Արժանաւորեա զսա խնդրել ըզ-փրկութիւն ժողովրդեան .քո, և .քեզ լսել ձայնի դորա. զի սուրբ և փառաւոր եղիցի անուն Թա-գաւորութեանդ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Դպիրքն. Ամէն:

Սարկաւագունքն յայնժամ. — Չափաւոր.

Եւ ե ւըս խա ղա ղու թեան

ըզ տէր ա ղա չես ցուք. ըն կալ,

կե ցո եւ ո ղո ր մեա:

Աւագ Սարկաւագն.

Օ րհ նեա

տէ ր:

Հայրապետն ասէ խաչակնքելով.

Զօրութիւն ամենասուրբ Հոգւոյն ի ձեռն իմոյ չափաւո-րութեանս այսուհետև դրոշմէ զ.քեզ՝ ընդունել զկարգ .քա-հանայապետութեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ ապա յեղանակել Դպրաց՝ Բարեխօ-սութեամբ մօր .քո եւ կուսի՝ ինչպէս Հայ-րապետն հանդերձ Եպիսկոպոսօք և ամենայն պաշտօնէիւք թափօրիւ, և յերթալն խնկարկէ, և իւրաքանչիւր պատարագաւորքն ընթա-նան առաջի և զկնի ըստ օրինի, և ընծայեալն զհետ ամենեցուն: Եւ յորժամ մտանէ թա-փօրն ընդ հարաւակողմն ի դրան, վկայքն ամե-նայն ըստ իւրաքանչիւր աստիճանի պատ-ուեալ կանգնին առաջի բեմի աւագ սեղա-նոյն. իսկ Հայրապետն հանդերձ Եպիսկոպո-սօք և ամենայն պաշտօնէիւք՝ և զհետ նոցա նուիրեալն՝ ելանէ ի բեմն. Եպիսկոպոսունքն կանգնին երկոսեան սեղանոյն ըստ կարգի, և յայնէ Աւագ Սարկաւագն. Օրհնեա Տէր:

Հայրապետն.

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւն, և լրանանկի պատարագն մինչ-չայն տեղի որ ասէ, Զի ողորմած և մարդասէր ես:

Ապա նոյն Հայրապետն յանուն յաջա-կողմն սեղանոյն՝ դէմ առ յարեւմուտս ոտնե-լով, և բերեն զնուիրեալն, որ է ծանուցա ա-կանէ առաջի Հայրապետին:

Աւագ Սարկաւագն քարոզէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա-չեսցուք: — (Տէր ողորմեա է ընդ.)

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց զՏէր ա-ղաչեսցուք: — Տէր ողորմ:

Վասն խաղաղութեան ամենայն աշ-խարհի եւ հաստատութեան սրբոյ Ա-թոռոյս եւ ամենայն ուղղափառ Եկե-ղեցեաց զՏէր աղաչեսցուք: — Տէր ողոր:

Վասն Հայրապետիս մերոյ Տեառն (այս անուն) Կաթուղիկոսի զօրութեան եւ օգնականութեան, առողջութեան եւ փրկութեան, որպէս զի յաջողեսցի գործ ձեռաց սորա՝ զՏէր աղաչեսցուք:

Վասն զի մարգարէքն Աստուած ամ-բիծ եւ անարատ շնորհեսցէ զքահա-նայապետութիւն սորա՝ զՏէր աղաչես-ցուք: — Տէր ողորմեա:

Վասն թագաւորաց եւ իշխանաց հա-ւատացելոց, եւ ամենայն քաղաքաց եւ գաւառաց եւ որք բնակեալ են ի նոսա Ազգ եւ Հօտ մեր՝ զՏէր աղաչեսցուք:

Վասն փրկելոյ զնոսա եւ զմեզ ի վշտաց եւ ի նեղութեանց՝ զՏէր աղա-չեսցուք: — Տէր ողորմեա:

Ընկա՛լ կեցո եւ ողորմեա եւ պա-հեա՛ զմեզ աստուածային շնորհիւդ:

Զամենասրբուհի Աստուածածինն՝ զօրհնեալ Տիրուհին եւ զմիշտ կոյսն յիշելով, եւ զամենայն սուրբս, եւ նոքօք զՏէր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան վասն՝ Զանձինս մեր:

Ողորմեա՛ց մեզ Տէր:

Եւ բացեալ զՍրբութիւնն յայն փեղկէն, յորում դրեալ է, Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ եօծ իսկ զիս Նա, (Ղուկ. Դ. 18.) դնէ ի վերայ ընծայացու-ցելոյն, և մի ոմն յԵպիսկոպոսաց կալցի զայն:

Եւ Հայրապետն դնելով զաջն ի վերայ գլխոյն՝ ասէ զաղօթս.

Տէր Աստուած մեր, որ զէ-ութիւն աստուածութեան քո ոչ կարաց տանել մարդկայինս բնութիւն, վասն որոյ քոյով տնօրէնութեամբդ անտակից մեզ վարդապետս կացուցեր ըզ-քահանայապետս՝ զքոյդ ունե-լով աթոռ, առ ի նուիրել քեզ պատարագս և ընծայս վասն ա-մենայն ժողովրդեանս: Դու Տէր՝ և զոր այսօր վերածեր տնօրէ-նութեամբ քո ի քահանայա-պետական շնորհ, տո՛ւր սմա նմանել քեզ ճշմարիտ Հովուիդ՝ դնել զանձն իւր ի վերայ ոչ-խարաց, առաջնորդ լինել կու-րաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, լուսատու տխեղե-րաց. զի հաստատեսցէ զհաւա-տացեալ անձինս ի կեանս յայս, և կացուսցէ առաջի բեմիդ քո անամօթալի, և զմեծ վարձս առցէ ի քէն՝ զոր պատրաստե-ցեր որոց ճգնեցանն ի քարո-զութիւն աւետարանիդ: Զի քո է ողորմութիւն և փրկու-թիւն, և քեզ փառս մատու-ցանեմք ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ:

Ապա դարձուցանեն զՍրբութիւնն դէպ յարեւմուտս, և նա ի ծունկս եկեալ՝ զՍրբութիւնն առեալ ի ձեռս ի նմա համբուրէ. և ապա պաշտօնեայքն ձայնիւ երգեն անդամ. — Զաստուածայինն.



ւը նու ըղ պէ տըս սըր բոյ սպա սա-
ւո րու թեան ա ռա քե լա կան
ե կե ղե ցւոյ, կո չէ
(ըստ ա նուան)
վար դա պետն ի քա հա նա յու-
թե նէ յե պիս կո պո սու-
թիւ ն սըր բոյ Ե կե ղե-
ցւոյ ի սպա սա ւո րու թիւն ըստ
վը կա յու թեա ն,
ան ձին իւ րոյ եւ ա մե նայն
ժո ղո վը ր դեա նս:

Դպիրքն. — Դանդ.

Արժա նի
է:

Դարձուցանեն զնորընծայն առաջի Հայրապետին, և նա ասէ ի նմա.

Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ ընու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական Եկեղեցւոյ, կոչէ (ըստ անուան) ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն՝ սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս:

(Աղա դնէ զձեռն խաչաձև ի վերայ գլխոյ նորընծային՝ և ասէ.)

Եւ դնեմ զձեռս ի վերայ, և դուք ամենեքեան աղօթս արարէ՛ք, զի արժանաւոր լիցի սա զանարատ Եպիսկոպոսութեան անարատ պահել առաջի Աստուծոյ:

Սարկաւագունքն յայնժամ.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ողորմեա:

Ասէ Սարկաւագն. Օրհնեա՛ Տէր:

Հայրապետն ասէ զաղօթս.

Գոհանամք զքէն Միածին Որդի Աստուծոյ՝ Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ այց արարեր գործոց ձեռաց քոց՝ ամենայն ազգի մարդկան. առաքեցար յաշխարհ կամօք Հօր ի փրկութիւն և ի խնդիր մեզ կորուսելոցս. խոնարհեալ ի մեր բնութիւնս՝ կանգնեցեր զմեզ ի դատապարտութենէ մեղաց մերոց չարչարանօք խաչի քո. եդեր զթշնամին ի ներքոյ

ոտից մերոց՝ նորոգելով զմեզ ի Հնութենէ մեղաց մերոց. Հորդեցեր մեզ ճանապարհ նոր և անապական ի մշտնջենաւոր կեանսըդ յարութեամբ քո: Առաքեցեր զսուրբ զառաքեալսն ըստ քում նմանութեան. ետուր նոցա համարձակութիւն՝ աշակերտել զամենայն հեթանոսս՝ զՀոգիդ քո ամենազօր ի նոսա փչելով, և զամենայն աւուրս կենաց նոցին մինչև ի կատարած աշխարհիս այսորիկ լինել ընդ նոսա խոստանալով՝ զօրացուցեր ի գործս վարդապետութեան: Որոց փոխանորդս և ժառանգս քահանայապետական աթոռոց յարուցանես միշտ ի սուրբ Եկեղեցւոջ քում՝ առ ի հովուել խնամով և պահել զգուշութեամբ յօտարաց, այլ և հանապազ աճեցուն առնել զբանաւոր Հօտ քո զոր ստացար՝ փրկանս տուեալ զպատուական և զկենդանացուցիչ արիւնդ քո:

Ընկալ և այժմ Տէր բարերար՝ զամենեցուն զմեր պաղատանս ծառայից քոց՝ որք ի սուրբ տեղւոջս ժողովեալ եմք միաբան առաջի քո՝ և խնդրեմք ի մարդասիրութենէդ քումմէ յաղագս ծառայիս քո այսորիկ, զոր ընտրեցեր և կոչեցեր շնորհօք քո ի գործ և ի պատիւ Եպիսկոպոսութեան: Հաստատուն պահեա՛ զսա ի կարգի քահանայապետութեան՝ օգնական սմա յամենայն ժամ լինելով և պաշտպան: Զօրացո՛ զսա ի գործս բարիս. մերժեա և հեռացո՛ ամենազօր բազկաւդ քով ի հօտէ քումմէ զերևելի և զաներևոյթ թշնամիս: Շնորհեա՛ սմա բան վարդապետութեան ի բանալ բերանոյ իւրոյ՝ առ ի կարող լինելոյ զմոլորեալս դարձուցանել ի գիտութիւն ճշմարտութեան, զերախայսն ածել յուղիղ հաւատս, զմեղուցեալս կոչել յապաշխարանս ի վատթար գործոց, և զառաքինիսն վարուք՝ անսայթաք և հաստատուն պահել. վասն զի այս են կամք քո միշտ յամենայն ժամ առ ժողովուրդըս քո: Տո՛ւր սմա զշնորհս զօրութեանց ի Հոգւոյդ քո առ ի վանումն հակառակամարտին, ի բժշկութիւն ախտաժետաց, ի սրբութիւն վտանգելոց յայսոց պղծոց, ընդունել զՀոգիդ քո սուրբ և զայլ ամենայն շնորհս՝ զոր պարգևէ առատապէս՝ հաւատով մկրտելոցն աստուածային աւազանաւն, ի հոտ անուշից նուիրել քեզ զահաւոր խորհրդոյն զպատարագս փրկու-

թեան հոգւոց, և գյաւիտենական կենացն գրաւական և առհաւատչեայ։ Մի՛ երբէք անքննին և վաղվաղուկ և անարժան ձեռնադրութեամբ հաղորդեսցի սա մեղաց օտարաց. այլ զարժանաւորսն սարկաւագունս և երիցունս կարգելով ի պէտս առաքելական Եկեղեցւոյ՝ սուրբ պահեսցէ զանձն, անբամբաս առ մարդիկ՝ և անարատ առ քեզ՝ սրտագէտդ Աստուած, լինելով ի կեանս իւր յառաջադէմ՝ կանխեալ և յաջողեալ ի պահպանութիւն պատուիրանաց Աստուածաշունչ գրոց, սիրով, հաւատով, հեզութեամբ, ճգնութեամբ, և ժուժկալ համբերութեամբ զարդարեալ՝ օրինակ լիցի ամենայն առաքինութեանց. պահօք և աղօթիւք և ամենագիշեր տքնութեամբ հայցեսցէ միշտ և ընկալցի զփրկութիւն անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան որ հաւատացաւ սմա։ Իշխանութիւն կալցի առաքելաբար յերկինս և յերկրի, թողուլ զմեղս և բանալ զդրունս արքայութեան երկնից՝ միջնորդութեամբ սորա եկելոցն առ քեզ. բաշխեսցէ ըստ իւրաքանչիւր պատշաճից՝ ուխտի Եկեղեցւոյ զկանոնեալ մատակարարութիւնս. եղիցի սա հայր և այցելու որբոց և այրեաց և աղքատաց ժողովրդեան, որ է ճշմարիտ կրօնաւորութիւն, և ունիցի զայլ ևս զամենայն ըզվարս առաքինութեան զպատուիրեալսն ի կանոնս Եկեղեցւոյ քո սրբոյ։ Եւ յերևել մեծիդ Աստուծոյ և Հովուապետիդ կացցէ զուարթերես առաջի ահաւոր բեմի քո՝ ասելով համարձակութեամբ, ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած. և ժառանգեսցէ ըզյաւիտենական կեանսն ընդ ամենայն սուրբս քո՝ ինքն և ժողովուրդն՝ որոց և հովուեաց, շնորհօք և մարդասիրութեամբ քո՝ Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ հրաւիրեցեր և կոչեցեր զամենեսեան ի քո արքայութիւնդ։ Ընդ որում Հօր ամենակալի՝ և կենդանարար և ամենասուրբ Հոգւոյդ վայելէ փառք և իշխանութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գողերտն Երգէն Շարական Դ.Կ.

Իմաստութիւն երկնային իջեալ։
Որ էն յէութեան։
Որ կոչեցեր զհեռացեալսն։
Որ անտես եւ անքննին։

Արեգակն արդարութեան:
Էջմիածինն ի Հօրէ եւ լոյս փառաց:
Փառք Հօր: Այժմ: Եկայք շինեսցուք:

Ըստ աւուրն Սաղմոս ՃԼԱ. կցուրդ: Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն: Փոխ. Յիշեա Տէր զԴաւիթ:

(Ընթերցուածս Գն յիշատակողաց)

Ընթերցուած յԵզեկիէլ մարգարէէ:

Այսպէս ասէ Տէր. եւ դու որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի. լուիցես յինէն զպատգամս եւ սպառնասցես նոցա իբրեւ յինէն: Յորժամ ասիցեմ ցանօրէնն՝ թէ մահու մեռանիցիս, եւ դու ոչ զգուշացուցանիցես նմա, եւ ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին, եւ դառնալ ի ճանապարհաց իւրոց չարաց եւ կեալ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից: Իսկ եթէ դու ըզգուշացուցանիցես անօրինին, եւ նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ եւ ի ճանապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ դու զանձն քո ապրեցուսցես:

(Ընթերցուածս Դաս ամն յիշատակողաց.)

Ընթերցուած ի Գործոց առաքելոց:

Բառնաբաս եւ Սօղոս դարձան յԵրուսաղեմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս: Էին ոմանք յԱնտիոք ըստ Եկեղեցւոյն մարգարէք եւ վարդապետք, Բառնաբաս եւ Շմաւոլն կոչեցեալն Նիգէր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մանայեն դայեկորդի Հերովդի չորրորդապետի, եւ Սօղոս: Մինչդեռ ի պաշտաման Տեառն կային եւ պահէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍօղոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա: Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ, եդին ձեռն ի վերայ նոցա եւ արձակեցին: Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելեւկիա, եւ անտի նաւեցին ի Կիպրոս. եւ հասեալ ի Սաղամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ:

(Ընթերցուածս այլ ամն յիշատակողաց.)

Պօղոսի առաքելոյն ի Տիտոսի թղթոյն է ընթերցուածս:

Պարտ է Եպիսկոպոսին անարատ լինել, որպէս եւ Աստուծոյ տնտեսի. մի յանդուգն, մի բարկացող, մի թշնամանող, մի հարկանող, մի զօշաքաղ. այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ՝ վերակացու լինել, հաւատարիմ բանին վարդապետութեան. զի կարող իցէ եւ մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն, եւ զհակառակորդսն կշտամբել:

Ալէ. ալէ. Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել ի յաթոռ նորա:

[illegible]

### Ի յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն, եւ դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յիսուս եւ եկաց ի մէջ նոցա, եւ ասէ ցնոսա. ողջոյն ընդ ձեզ։ Իբրեւ զայս ասաց, եցոյց նոցա զձեռս եւ զկողսն իւր. եւ խնդացին աշակերտքն իբրեւ տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրեւ ասաց, փչեաց ի նոսա եւ ասէ. առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի։

[illegible]

Փառք քեզ Տէր Ա ս տուա -

ծ մե ր ։

[illegible]

[illegible]

ա. Տէր Ա ս տուա ծ Հար ցըն

մե րոց, ա մե նա զօր գոր ծովք

եւ ա ռատ ո ղոր մու թեա-

մբ. ա -

ղա չե մք ։

Գոպ. — Լուր Տէր եւ ո ղո ր-

մեա ։

բ. Որ ա րա րե ր ըա-

քան չե լիս մե ծա մեծս փա ռա-

ւո րեալս եւ ան քըն նի նս, ո-

րոց ոչ գոյ չափ, եւ միշտ առ նե-

ս, # աղաչեմք։

գ. Խո նար հե ցա ր ի

հայ րա կան ծո ցոյ ի մեր ընու-

թիւ նս բանդ Ա ս տուա -

ծ, մար մին ա ռեալ կա մաւ
հօր ընա կե ցար ի մե . -
գ, # աղաչեմք:

Դ. Ա զա տե ցե ր զադգս
մարդ կան ի ծա ռա յու թե նէ
ա պա կա նու թեան մե ղաց խա-
չի ւըդ սըր բո վ, ա ըա-
րե ր խա ղա ղու թիւն
յեր կինս եւ յերկ րի եւ հաշ տե-
ցու ցեր զաս տուած ընդ մարդ կա-
ն, # աղաչեմք:

Ե. Ընտ րե ցե ր քեզ յա-
մե նայն մարդ կա նէ ժո ղո վուրդ
սեպ հա կան զե կե ղե ցի քո
սու րբ տա ճա -

ր ընա կու թեան փա ռա ւո րեալ
ա մե նա սուրբ Նր բոր դու թեա-
նդ, # աղաչեմք:

Զ. Կար գե ցե ր ե կե-
ղեց ւոյ քում հո վիւս եւ վար դա-
պետս եւ միշտ յա րու ցա նես
ժա ռանգս յա թո ռո ց առ
ի հո վուե լ ժո ղո-
վըր դեան քում հո գե ւոր ի մաս-
տու թեա մբ, # աղա:

Է. Յա ղա գս Ն պխս կո-
պո սա պե տխս մե րոյ Տեա ռըն
(այս ա նուն) սըր բա զան Կա թու-
ղի կո սխս կե նաց եւ փըր կու-
թեան սո րա եւ ո -


րք յա մե նայն տի ե-
ղերս ուղ ղա փառ ե պիս կո պո-
սու նք, # աղաչեմք:
Բ. Եւ ե ւս յա ղագս նը-
ւի րե լոյս զոր ընտ րե ցեր
եւ կո չե ցեր ի կարգ քա հա-
նա յա պե տու թեա ն օգ նա-
կա ն սը մա եւ
պաշտ պան յա մե նայն ժամ լի նե-
լո վ, # աղաչեմք:
Գ. Յա ղա գս պա հե լոյ
ըղ սա ա ներ կիւղ ե ւ ա նա-
րատ ի գործ ե պիս կո պո սու-
թեա ն հը զոր բաղ կաւ քով
ի սա տա նա յա կան ո րո-
գայ թից յե րե ւե լի
եւ յա նե րե ւոյթ թըշ-
նա մեաց ճըշ մար տու թեա -
ն, # աղաչեմք:
Դ. Շնոր հեա սը մա հո-
գի հան ճա րոյ եւ զօ րու թեան
առ ի կա րող լի նե լոյ
հո վուել հօ տի քու մ բան
կա մա ց քոց բա-
րե սի րաց զա մե նայն ա ւու-
րըս կե նաց իւ րո
ց, # աղաչեմք:
Ե. Յա ղա գս որ աստ պա-
տուա կան ե րի ցունք եւ սար կա-
ւա գունք եւ յա մե նայն տի ե -


զե րս եւ բո վան դա -
կ ուխ տի սըր բոյ է կե-
ղեց ւոյ, վա նա կա նաց ա մե-
նե ցուն որք ի շէնս եւ յա նա-
պատս բնա կեալ կրօ նա ւո րու-
թեա մբ, # աղա:
Ժէ. Վ.ա ան բա րե պաշտ Թա-
գա ւո րաց եւ իշ խա-
նաց հա ւա տա ցե լոց, խա ղա-
ղու թեան աշ խար հի եւ
հաս տա տու թեա ն
սըր բոյ է կե ղեց ւոյ եւ ժո-
ղո վըր դոց ա մե նայն քրիս տո-
նէ ի ց, # աղա:
Ժգ. Փըր կեա ըզ ժո ղո-
վուր դըս քո եւ օրհ-
նեա ըզ ժա ռան-
գու թիւ նըս քո : #
Ժդ. Եւ եւս ա ռա ւե -
Լ զի ըն կալ ցի տէր ըզ-
պա շա տա նըս մե -
ր, # աղաչեմք:
Ժե. Զան ձի նըս մե ր
եւ ըզ միմ եա նըս տեա ռն Աս-
տու ծոյ ա մե նա կա լին յանձն
ա րաս ցու ք:
Դպ. — Քեզ Տէա ռնդ յանձն է -
զի ցու ք:
Ժզ. Ս զօր մեա ց

մե զ Տէր աստուած մե ր ըստ
մե ծի ո ղոր մութեան քում· ա-
սաս ցուք ա մե նե քեան մի ա-
բա նու թեա մբ :

Դպ. —
Տէր ողոր մեա Տէր
ո ղոր մեա, լուր Տէր ե ւ ո-
ղո ր մեա :

Հայրապետն եդեալ զԱՋՆ ի վերայ գլխոյ նորընծային՝ ասէ զաղօթս.

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր՝ մարդասէր և բազումողորմ. որ կոչեցեր զծառայս քո զայս հոգևոր օրհնութեամբ ի գործ եպիսկոպոսութեան, ետուր սմա զայս վիճակ առաքելական վերակացութեան, և կարգեցեր զսա առաջնորդ ժողովրդեան քում և ամենայն ուխտի Եկեղեցւոյ քում սրբոյ: Լցո զսա Հոգւովդ քո սրբով. զօրացո և յաջողեա սմա օգնականութեամբ քով յամենայն գործս բարիս, որպէս զի կարասցէ անարատ վարուք ըստ կամաց քոց բարեսիրաց հովուել երկնային իմաստութեամբ բանաւոր Հօտի քում: Զամենայն աւուրս կենաց իւրոց պահեսցէ զգուշութեամբ զինքն և զժողովուրդն որ հաւատացաւ սմա՝ ի փառաւոր իրաց, և երկնաւոր յաւիտենական խորանացն պատրաստել: Եւ մեր ամենեցուն հոգևոր ողջունիւ ընկալեալ զսա այժմ՝ գոհասցուք ըզքէն մարդասէր Աստուած՝ յաղագս տուեցելոյս պարգևաց և խոստացեալ անսպառ կենացն: Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել ընդ ամենայն սուրբս քո, շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր ամենակալի՝ համդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս:

Խաղաղութիւն ամենեցուն:

Սարկ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Սարկ. Առաջի քո Տէր:

Արժան և իրաւ և ճշմարիտ յամենայն ժամ գոհանալ ըզքէն, Տէր սուրբ Հայր ամենե-

կալ և անժամանակ Աստուած, վերապատուեալ բարձրութեամբ և փառաւորեալ մեծութեամբ. որոյ փառացդ սպասաւորեն երկնաւորացն դասակարգութիւնք: Դու Տէր, որ Մովսեսի ծառային քո, ընդ որում խօսեցար ի միջոյ հրոյն, հրաման ետուր առնել զգեստս քահանայականս և զգեցուցանել Ահարոնի, որով կատարէր նա զպաշտօնն, նկարագրեցեր այնու զլումն ճշմարտութեանս որ գալոց էր զկնի՝ հանճարով քոյին գիտութեամբդ. քանզի նախախնամութիւն քո ոչ բաժանեցաւ ի մէնջ և ոչ առ մի ինչ ժամանակ: Վասն որոյ զոր նկարագրեցեր առաջնոցն՝ զնոյն և մեք որ եկաք զկնի՝ առաք զգեստս քահանայականս ի սիրտս մեր. զի ոչ ի զգեստս է պատիւ Եպիսկոպոսութեան, այլ ի սրտին մաքրութեան: Իսկ յայնմ ժամանակի յորում կատարէին որդիքն Իսրայէլի զպաշտօն իւրեանց մարմնաւոր՝ պատուական զգեստուք կային առաջի քո յազօթս, որպէս հրամայեցերն: Արդ այժմ զծառայս քո զոր ընտրեցեր ի խորհուրդ քահանայապետութեան, խնդրեմք ի քէն տալ սմա շնորհս սրտի պայծառազգեստութեան, ըստ որում ոսկւով և ականակք զարդարէին որդիքն Իսրայէլի ի պաշտօնն զքեզ: Հեղ ի վերայ սորա հոգւովդ սրբով զպատիւ բարձրագոյն իշխանութեան քահանայապետական կարգի: Սուրբ արա զսա ըստ նմանութեան ըզգեստուցս մաքրութեան, և կատարեա զսա քո երկնային օծութեամբդ:

Դպիրքն երգեն Շարական Դ.Զ, Կենդանարար Աստուած. և մի ոմն յեպիսկոպոսաց գնայ հանդերձ բուրվառակիր սարկաւագօք և վառեալ մոմեղինօք ի Ս. Գեղարդեան պահարանն, և առեալ բերէ զսուրբ Միւռոնն ի բեմն առաջի սեղանոյն: Իսկ Հայրապետն ընկալեալ երկեա՝ ընկալնու խոնարհութեամբ և տեառնագրէ ի վերայ ժողովրդեան. որ և ընդ ն Հայրապետն ի յայն սկսանելով զՇարականն Առաքելոյ աղաւնւոյ, ի սկսանելն Մեղ Մեղ յերկից տանց Շարականին հեղու յսնեղոյ յանօրն զՄիւռոնն:

Իսկ աստ Դպիրքն բարձր ձայնիւ եղանակեն:

Միջակ կամ Զփառ.



Եւ Հայրապետն օծանէ զճակատ նորընծայելոյն առաջի Տէրունեան ասելով.

Օրհ նես ցի օծ ցի ե ւ

սըր բես ցի ճա կատ (այս ա նուն) Ե-

պիս կո պո սի ա յս նը շա նա-

ւ սուրբ խա չիս եւ սուրբ ա ւե-

տա րա նաւ եւ սըր բա լոյս մի ւ ռո-

նաւս եւ ա ւու րըս շնոր հիւ,

ան ուամբ Հօ ր ե ւ Որ-

դւոյ եւ Հո գւոյն սըր բո յ

այժմ եւ միշտ եւ յա ւի տեանս

յա ւի տե նի ց:

Հայրապետն ասէ.

Գլուխ քո եղիցի օծեալ և օրհնեալ երկնային օրհնութեամբ ի պատիւ Եպիսկոպոսութեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Եւ ապա Դպիրքն ասեն.

Ա մէ ն ա լէ լու-

իա ա լէ լու իա ա լէ-

լու իա :

Հայրապետն ասէ.

Օրհ նես ցի օծ ցի ե ւ

սըր բես ցի բոյթ մատն ա ջոյ ձե ռին

(այս ա նուն) Ե պիս կո պո սի

ա յս նը շա նա ւ սուրբ

խա չիս եւ սուրբ ա ւե տա րա-

նաւս եւ սըր բա լոյս մի ւ ռո-

նաւս եւ ա ւու րըս շնոր հիւ, ան-

ուամբ Հօ ր ե ւ Որ դւոյ եւ

Հո գւոյն սըր բո յ այժմ եւ

միշտ եւ յա ւի տեանս յա ւի -

տե նի ց:

Դնեն զձեռն ի գլուխ նուիրելոյն։

Դպ.-Ա մէ ն:

Հայրապետն ասէ.

Օրհ նու թիւն եւ փա ռք հօ ր

եւ Որ դւոյ եւ Հո գւոյն սրբ բո-

յ այժմ եւ միշտ եւ յա ւի տեանս

յա ւի տե նից, ա մէ-

ն :

Եւ ապա ընթեռնու Հայրապետն զաղօթս.

Օծումն զոր հեղեր առաւօտութեամբ ի գլուխ սորա՝ սփռեսցի լիապէս ընդ ամենայն մարմին սորա, և զօրութեամբ սուրբ Հոգւոյդ որ ի սմա՝ լցցի սիրտ սորա, և մնասցէ միշտ ի հաւատս և ի սէր ճշմարտութեան, ի պարզմտութեան և ի խաղաղութեան. որք իւր եղիցին գեղեցիկք յաւետարանել զխաղաղութիւն և զամենայն բարութիւն։ Տէր Աստուած մեր՝ բարեխօսութեամբ ... սմա խորհուրդս ողջախոհութեան ի բանս և ի գործս աքանչելի առհաւատչէիւս. զի խօսեսցի և ուսուսցէ ամենայն գիտութեամբ և իմաստութեամբ ի ձեռն շնորհաց Հոգւոյդ սրբոյ։ Աղաչեմք զքեզ Տէր, տուր սըմա զփականս արքայութեանդ երկնից երկնաւոր կարգաւս ունել առանց հպարտութեան և բարձրամտութեան, այլ զի կալցի միայն ի փառս քո և ի պաշտօն՝ որոյ վասն տուաւ ինքեան։ Եւ դու շնորհեա սմա զօրութիւն, զի զոր ոք ի մարդկանէ կապեսցէ ի վերայ երկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցէ յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։ Լիցի սա ծառայ հաւատարիմ՝ զոր կացուցեր ի վերայ ծառայից քոց՝ տալ նոցին կերակուր ի ժամու. իբրև զիմաստուն տնտես՝ փոյթ լիցի և մի՛ հեղգ ի պաշտօն քո, ատեցող հպարտութեան և սիրող խոնարհութեան, և մի՛ ի բացեայ լիցի ի սմանէ հեզութիւն, այլ կացցէ միշտ ի խոնարհութեան և յերկիւղի քում։ Մի՛ դիցէ զլոյս՝ խաւար, և զխաւարն՝ լոյս, զչարն՝ բարի, և զբարին՝ չար, այլ արդարութեամբ կացցէ ի գլուխ ժողովրդեան քո։ Տէր Աստուած մեր՝ իմաստնացո զսա լինել ընդ իմաստունս՝ իմաստուն, և ընդ յիմարս՝ յիմար, զի զամենեսեան շահեսցի, և ամենեցուն լիցի ձե-

ռընտու: Տո՛ւր սմա զաթոռ եպիսկոպոսութեան, և զեկեղեցին և զժողովուրդն զոր սմա հաւատացեր՝ ընդ հովանեաւ քով պահել. և զօրացո՛ զտկարութիւն սորա հեղմամբ օրհնութեանս զոր շնորհեցեր սմա առատապէս: Աղաչեմ զմեծ քո զողորմութիւնդ Տէ՛ր, պարգևօք քո զօրացո՛ զսա ի նմանութիւն խոնարհութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր ամենակալի և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Սարկ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Սարկ. Առաջի՛ քո Տէր:

Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ կամօք իւրովք բարձրացոյց զքեզ ի պատիւ եպիսկոպոսութեան, կարողութեամբն իւրով կնքէ զքեզ յօծումն սուրբ, և լնու առատապէս հոգևոր օրհնութեամբ: Վասն որոյ օրհնեալն ի քէն՝ օրհնեալ եղիցի, և սրբեալն ի քէն՝ սրբեալ եղիցի, և զամենայն զոր ինչ կնքես ձեռամբ քո և բութիւ՝ սրբեսցի, և յորոց վերայ հանգչիցի աջ քո՝ եղիցի նոցին փրկութիւն և ողորմութիւն:

Եւ տայ Ծայրապետն զԳաւազանն ի ձեռս Նորընծային՝ ասելով.

Ընկա՛լ ի քեզ զայս ցուպ և գաւազան պատույ առաջնորդութեան՝ առ ի զչարագործսն գատել արդար և անաչառ իրաւամբք, և զհնազանդսն հովուել և արածել յօրէնս և ի պատուիրանս Աստուծոյ յամենայն ժամ:

Եւ դնէ զՄատանին ի ճկոյթ մատն Նորընծային՝ ասելով.

Ընկա՛լ մատանի առհաւատչեայ հաւատարիմ, և մնա՛ ըղձուշութեամբ յաստուածայինդ քո փեսայութիւն սուրբ Եկեղեցւոյ ճշմարիտ և ուղիղ հաւատով:

Ապա տայ ի նա զԱւետարանն սուրբ ասելով.

Ա՛ռ ի քեզ զԱւետարանս զայս երկնից արքայութեան, և գնացեալ քարոզեսցես ժողովրդեանըն որ յԱստուծոյ քեզ հաւատացաւ: Եւ Աստուած՝ որ կարող է ամենայնի՝ աճեցուսցէ զնոսին շնորհօքն իւրովք, և թագաւորեսցէ նոցա յաւիտեանս յաւիտենից:

Դպիրքն ասեն Շարական ԴԶ.

Որ ի վերայ բղխեալ գաւազանի:

Ալէ. ալէ. Կացուցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր, և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց.

Եւ ընթեռնու Հայրապետն զԱւետարանս զայս:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, եւ ուսուցանէր: Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս. այլ ագանել հողաթափս, եւ մի զգենուցուք՝ ասէ՝ երկուս պարեգօտս: Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, եւ բժշկէին զնոսա:

Ապա Սարկաւագն. Սուրբ խաչիւս:
Հայրապետն ասէ. Պահպանիչ եւ յոյս:

Եւ ասէ Սարկաւագն յայտնի.

Ողջոյն տուք միմեանց ևն:

Եւ յաւելու Սարկաւագաց՝ Որք հաւատով կայք յանդ. Եւ զստոյգ փրկութեան ևն. Քարշեն զվարագոյրն, և փոխէ Հայրապետն զշուրջառն: Իսկ զգեստաւորեալ Եպիսկոպոսունքն և [illegible] գնան ըստ իւրեանցն կարգի ի սուրբ Գէորգեան պահարանն, և հանեալ զզգեստս իւրեանց՝ գան կանգնին ի դասս. Միայն երկուքն յԵպիսկոպոսաց ի բաց եդեալ զ[illegible] և զեմփորոն իւրեանց՝ կանգնին կան յաջմէ և յահեկէ Հայրապետին:

Նորոգ ձեռնադրեալ Եպիսկոպոսն կանգնի ի բեմ և ընդ Հայրապետին հաղորդի նշխարաց մարմնոյ և արեան Տեառն. և յաւարտ պատարագին իջանէ զկնի Հայրապետին ի բեմէ անտի, և գայ կանգնի առաջի բեմին՝ [illegible], և [illegible] ի Հայրապետէն և ի պաշտօնէից և յամենայն ժողովրդոց:

Վազգէն Ա

Ի— յորժամ հանդերձի նորոգ ձեռնադրեալ Եպիսկոպոսն գնալ ի վիճակ իւր, Հայրապետն տայ նմա հրահանգս և օրէնադրութիւնս ըստ առաջիկայ օրինակիս։

## ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԽՐԱՏՔ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԶՈՐՍ ՏԱՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԶՈՐ ՁԵՌՆԱԴՐԵԱՑ·

Պատուական եղբայր, որովհետեւ ձեռնադրեցաք հրամանաւն Աստուծոյ եւ ընտրութեամբ ժողովոյ քաղաքին (այս անուն), որք միաբան խնդրեցին զքեզ իւրեանց այցելու, եւ կամօքն Աստուծոյ առաքեցին զքեզ առ մեզ. եւ արդ եւս ձեռնադրեցար եւ օծար։ Այսուհետեւ գիտասջիր, զի բարձեր ծանր բեռն եւ աշխատութիւն հոգեւոր. տես եւ զգուշացիր, զի կարող լիցիս համարձակ դիմօք տալ պատասխանի առաջի Քրիստոսի։ Ոչ եկի պաշտօն առնուլ, ասաց Տէր մեր, այլ պաշտել եւ տալ զանձն իմ փրկանս փոխանակ հօտիս. նոյնպէս եւ մեք որ զկնի եկաք նուաստ ծառայքս վերնոյ Արքային՝ պարտիմք մեծաւ աշխատութեամբ արածել զոչխարս զորս Հովիւն գերագոյն յանձն արար մեզ, զի կարասցուք ածել զնոսա ի փարախն Քրիստոսի շնորհօք եւ օգնականութեամբ նորին։ Վասն որոյ, եղբայր սիրելի, զհաւատն զոր ցուցաք քեզ ճշմարտութեամբ եւ հեզութեամբ ի սկիզբն ձեռնադրութեանդ քո՝ աղաչեմք զի պահեսցես անարատ եւ առանց բաժանման. զի նա է հիմն ամենայն խորհրդոց։ Գիտեմք՝ զի ես իմաստուն ի մանկութենէ, հմուտ սուրբ գրոց եւ ուղիղ վարժեալ ի հրամանս կանոնականս սուրբ Եկեղեցւոյ. եւ թէպէտ այսպէս, սակայն փոքր ինչ ցուցանեմ քեզ հեզութեամբ զիմ բանքս։

Յորժամ կատարես ձեռնադրութիւն, արասցես ըստ բարեկարգութեան Եկեղեցւոյս Հայոց։ Տես եւ զգուշացիր ոչ դնել զձեռն քո վաղվաղակի յուրուք վերայ. զի մի հաղորդեսցիս մեղաց օտարաց։ Զօտարն զոր ոչ ճանաչես, կամ զինքնահաճ ոք եւ կամբարտաւան, կամ զոք որ ծառայ է այլոց, մի դներ ի կարգն սուրբ, զի կորնչին այնպիսիքն եւ անկանին ի հաղբս սատանայի, եւ դու լիցիս նոցին մասնակից. այլ զայնպիսին կարգեա ի սուրբ Եկեղեցի՝ որք ունիցին զհասակ կատարեալ, եւ որ կարողքն իցեն հաւատով եւ գիտութեամբ կալ առաջի Աստուծոյ եւ մարդկան։ Այլ եւ ծանրագոյն յանցանք են ունել յանձին զայս ինչ զոր ձգեսցես ի քէն ի բաց իբրեւ զթոյն մահացուցիչ. եւ զինչ իցէ. ագահութիւն։ Տես զի մի արմատասցի ի սիրտ քո, եւ մի վասն տրոց զոր տայցեն քեզ՝ զձեռն քո դիցես ի վերայ ուրուք եւ մի Սիմոնական երբէք լիցիս. քանզի եւ զայս Տէրն մեր ամենեւին ատեաց. հալածեա ի քէն եւ զգոյշ լեր, վասն զի ձրի ընկալար եւ ձրի տուր, ըստ բանի գրոյն որ ասէ. Որ վերացուցանէ զձեռն իւր ի կաշառաց՝ նա շինէ զտուն իւր ի վերայ վիմի հաստատնոյ. հաց տացի նմա, եւ ջուր նորա հաւատարիմ. նոքա որ զայս գործեսցեն՝ տեսցեն զԹագաւորն փառօք իւրովք։

### Դարձեալ խրատ եւ զգուշութիւն.

Տես եղբայր, առ ի լինել քեզ խաղաղարար եւ ժուժկալ, յորժամ լինիցիս ի սենեակ քո՝ կամ աղօթեա կամ ընթերցիր. եւ ուր լինիցիս՝ մի մտցէ անդր կին։ Յամենայն կրօնաւոր կանանց զգուշացիր. սիրեա զնոսա ողջախոհութեամբ, եւ պարսպեա զանձն քո ի պատրանաց, եւ մի ի քեզ ինքն ապաստան լինիր. զի ոչ ես ուժեղ քան զՍամփսոն եւ ոչ հանճարեղ քան զՍողոմոն։ Յորժամ կամիցիս մտանել ի տուն կամ ի յարկս կանանց՝ առ ի խօսել եւ մխիթարել եւ յայտնել նոցա զկարգս ուղղութեան, մի մտանիցես ի ներքս դրանց նոցա միայնակ, այլ կալցիս ընկերակիցս զկնի քո, զի մի ոք տեղի գտցէ չարախօսել ի քոց մերձաւորաց. քանզի պարտ է Եպիսկոպոսին կալ ազատ ի մեղադրանաց, եւ վկայութիւն ունել յամենայնի, զի մի ոք ի մարդկանէ համարձակեսցի բամբասել զնա. ըստ որում եւ գրեալ է յԱւետարանին՝ մի գայթակղեցուցանել զոք։ Յամենայն աւուր աղաչեա եւ յօժարամիտ կամօք ցոյց ժողովրդեան քում զօրէնս Աստուծոյ։ Մեկնեա զգիրս սուրբս յամենայն դէպս եւ դիւրալուր արա զնոսին, ըստ որում եւ յԱստուծոյ տուեալ է քեզ շնորհդ։ Զգիրս սուրբ ընթերցիր միշտ, եւ անխափան լիցին ի ձեռս քո, եւ եւս քան զեւս հաստատեա ի միտս քո զընթերցեալսն. եւ յորժամ խափանիս ի կարդալոյ, յաղօթս պարապեսջիր։ Հայեաց միշտ յանձն քո, եւ եթէ տեսանես ինչ յորում սխալեալ իցես՝ ի բարին դարձո, իսկ եթէ ի բարին զքեզ գտանիցես, եւս առաւել յաւելջիր ի նոյն։ Զգոյշ լեր իմաստութեամբ ուսուցանել միշտ. ուսիր հաստատուն հաւատով, զի ուսուսցես ամենայն լսողաց առանց նախատանաց, եւ կարող լիցիս կարկել զամենայն հակառակողս։ Յիշեա եւ կացցես յայն ինչ զոր ուսար՝ ի հրամայեալն քեզ ի ձեռնադրութեան քում։ Պատրաստ լիջիր հանապազ տալ պատասխանի վասն յուսոյն որ ի քեզ է. եւ գործք քո մի ապականեսցեն զքեզ եւ զբանս քո. մի դուցէ յորժամ խօսիցիս յեկեղեցւոջ քում՝ գտանիցի ոք անդ, որ պատասխանի տացէ քեզ եւ ասասցէ՝ թէ ասես եւ ոչ առնես։ Արդ զի մի ոք ասիցէ՝

թէ ընդ-Քը ոչ առնես զոր ասեսդ, զգուշացիր վար-
դապետ՝ մի տանել զորովայն քո ծանրացեալ, եւ մի
տասացեն թէ ուսուցանես պահել՝ եւ ուտես։ Գողու-
թիւն եւ ագահութիւն ոչ թաքչին. զգուշացիր ոչ
գողանալ ագահութեամբ զիրաւունս Աստուծոյ։ Վա-
սըն այսորիկ խրատէ առաքեալն՝ զանձն քո օրինակ
տալ հօտին. զի զքո բարւոք կարգին զտոլորութիւնն
օրինակ առցեն որդւքն քո, եւ ըստ բարի գործոցն
զոր տեսանեն ի քեզ եւ յընթացսն քո՝ ճանապար-
հորդակից քեզ լինիցին, եւ զքեզ յամենայն ի բարիս
ի վկայութիւն առնուցուն։ Արդ բարիոք խրատեա,
որպէս զի քո խոնարհութիւնդ նուաճեսցէ զնոցին
զայրացումն, քս սիրելութիւնն զօրացուսցէ զնոցին
սէրն. զի միանգամ խրատեալք՝ մի եւս կարօտիցին
երկրորդին։ Բարիքն ճաշակեսցեն զխրատուն քո քաղ-
ցրութիւն. իսկ չարքն ըմբերանեսցին ի քէն զայրաց-
մամբ, որպէս զի զգուշասցին սիրել զհոգիս, եւ կալ-
ցին ատելութիւն առ մեղս։ Տես՝ մի տրտմութիւն ան-
հաւանութեան հեղգացուսցէ զքեզ ի խրատելոյ զժո-
ղովուրդ քո, զի մի ոք ասասցէ՝ թէ սա վասն տգի-
տութեան կորեաւ։ Յորժամ հատանես զվէրսն, մի
վնասեսցես անարատին, այս ինքն արդարութեամբ
դատեսցես եւ ըստ ճշմարտութեան։ Այլ եւ խրա-
տեմ զքեզ ոչ պահանջել զամենայն սխալանսն որոց
առ քեզ յանցաւորացն, եւ մի երբէք պահեսցես
ոխս, այլ հանապազ ի քո իրաւունսդ խառնեա զո-
ղորմութիւն, զի կարող լիցիս ասել ըստ մարգարէին.
Ողորմութիւն եւ իրաւունս օրհնեցից զքեզ Տէր։
Երկիւղ հոլուաց հաստատեսցի առ քեզ, եւ սէր
ճշմարիտ մնասցէ ի քեզ, զի զհանդարտն հովուես-
ցես սիրով, եւ որք խռովարարքն իցեն եւ ամբոխիչք՝
սաստիւ պատուհասեալ ածցես յուղղութիւն։ Մի ակն
առնուցես երեսաց մարդոյ ի դատաստանի. մի փարթա-
մըն պատրեսցէ զքեզ յաչառել, եւ մի աղքատն
տարջացուսցէ զքեզ ողորմել յիրաւունսն որ լինին
յատեանն Աստուծոյ։ Զգանձս սուրբ Եկեղեցւոյն զոր
ընկալար՝ պահեսցես եւ զգուշութեամբ բաշխեսցես.
այլ եւ սպասաւորեսցես հաւատով, զի մի ոք կարող
լինիցի բամբասել զքեզ. եւ կացցես իբրեւ զօտար ի
բաշխելն, որպէս զի բանն Տեառն լցցի առ քեզ զոր
ասէ. Ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր
կացուսցէ Տէր ի վերայ տան իւրոյ՝ տալ ծառայից
կերակուր ի ժամու։ Օտարընկալ լեր եւ ողորմած,
եւ երկիւղիւ տուր զինչս քո աղքատաց՝ այնչափ որ-
չափ զօրութիւն քո կարող իցէ ժուժկալել. զի որ
խնու զականջս իւր ընդդէմ բարբառոյ աղքատաց,
եկեսցէ ժամանակ՝ զի ինքն աղաղակեսցէ, եւ ոչ լինի
լսելի։ Այրիք եւ որբք եւ փոքունք խնդասցեն ի քեզ
եւ ասասցեն՝ թէ ունիմք հովիւ խոնարհ եւ գթած։
Զդատաւորսն որք թիւրութեամբ դատեն՝ խրատեսցես
եւ դարձուսցես ի չար ճանապարհէն, եւ ապրեցուս-
ցես զանձն քո, եւ քո ոյժդ զօրեղապէս կացցէ հա-

կառակ նոցին, եւ խրոխտ լիցիս ի մարտնչել ընդ նոսա՝
մինչեւ դիցեն զպարանոցս իւրեանց ընդ լծով օրինացն
Աստուծոյ։

Եթէ այսպէս կացցես ի պաշտաման քում յամե-
նայնի, պահպանեսցէ զքեզ Աստուած եւ աճեցուսցէ
զհօտ քո. եւ զդայլն մոլորեալ՝ որ գիշատել հնարի
զհոգիս արանց բարեաց՝ արտաքս վարեսցես ի փա-
րախէն Քրիստոսի, զի մի ոք ըմբռնեսցի ի հօտէ
քումմէ որչափ իցեն ի պանդխտութեան կենացս։
Դարձեալ զգոյշ լեր, զի ոչ մի ինչ կարասցէ կոր-
ծանել զքեզ ի հաստատութենէ յուսոյ եւ սիրոյ եւ
երկիւղին Քրիստոսի, ոչ ամբարտաւանութիւն եւ ոչ
այլ ինչ խորհուրդ չարութեան, ոչ ի հանդիստ քո
բարձրամտել եւ ոչ ի փորձութեան քում նուաստա-
նալ, այլ լիցիս միատարր հաւասարութեամբ իբրեւ
զօտար յաշխարհէ. զի այսպէս կարող լիցիս առ ամե-
նայն ինչ եւ կացցես մնասցես յամենայն կարգս
ուղղութեան, եւ ծանիցիս ի մէջ մարդկան այր ա-
ռանց արատոյ։

Սուրբ Երրորդութիւնն պահպանեսցէ զքեզ եւ զեղ-
բայրութիւնդ քո եւ զողջախոհութիւն կենաց քոց
ընդ հովանեաւ իւրով, զի գնասցես ի կատարումն
վաստակոցդ զոր ընկալար ի մշակել զայգի Տեառն
զօրութեանց. եւ արասցես զայդ արդարութեամբ,
եւ յաւուր անանց փոխարինին կարող լիցիս լսել ի
Տեառնէ մերմէ զոր ասէն. Ազնիւ, ծառայ բարի
եւ հաւատարիմ. որովհետեւ ի սակաւուդ հաւատա-
րիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ
յուրախութիւն Տեառն քո։

# ԿԱՐԳ

## ՎԱՒԵՐԱՑՈՒՑԱՆԵԼՈՅ ՁԻՐԱՒՈՒՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՑՆ ՅԱՆՎԱՒԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅ ՍՍՈՅ ԵՒ ԱՂԹԱՄԱՐԱՅ

---

Եթէ ոք ընկալեալ իցէ զեպիսկոպոսական ձեռնադրութիւն յաթոռակալ կաթողիկոսաց Սսոյ և Աղթամարայ, և դիմեալ եկեսցէ ի Մայր Աթոռ՝ հայցելով զհաստատութիւն, պարտ է նախ Ս. Հայրապետին զգրաւոր խոստովանութիւն հաւատարմութեան և հպատակութեան Մայր Աթոռոյ՝ և Գահակալի նորին:

Եւ ապա այս կանոն կատարի յԵկեղեցւոջ:

Հրաւիրէ զնա Հայրապետն ամենայն Հայոց մատուցանել զսուրբ Պատարագ ի սեղանի Իջման տեղւոյն: Զգեստաւորեալ նորա ի պահարանի սրբոյն Գէորգայ՝ քահանայական զգեստուք, առանց եմիփորոնի ունելով ի գլուխ իւր զսաղաւարտ, գայ յատեանն և ի ծունկս անկանի առաջի սրբոյ սեղանոյն:

Գովերգն ասասցեն Տէրունեան Գ.Կ.

*Հովիւ քաջ բանաւոր հօտի:*

Զկնի ասի Սաղմոս կցուրդ.

*Ալէ. ալէ: Կացուցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց:*

Եւ Հայրապետն ընթեռնու զԱւետարանն որ ըստ Մատթէոսի:

*Յետ յարութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:*

*Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա, եւ ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի:*

Ապա ասի Տէրունեան Դ.Զ.

*Որ ի վերայ բղխեալ գաւազանի:*

Եւ մինչ դպիրքն երգեն, Հրամանա- Հայրապետին հագուցեն զեմիփորոնն և դնիցեն զԹագն ի գլուխ նորա, արկցեն զմատանին ի մատն՝ և տայցեն զգաւազանն ի ձեռն:

Եւ ասէ Հայրապետն.

Ա՛ռ քեզ իշխանութիւն ի Հոգւոյն սրբոյ, և ի սրբոց Նախակին հեղինակաց Քահանայապետութեանս մերոյ ի Բարդուղիմէոսէ և ի Թադէոսէ առաքելոց, և ի սրբոյ Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ, և ի նոցին յաջորդէս, կատարել այսուհետև և պաշտել իրաւամբ և անխափան համարձակութեամբ զկարգ Եպիսկոպոսութեան, և հովուել զժողովուրդն Քրիստոսի ըստ կամաց նորին և ըստ աւանդութեան սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց, որպէս զի յերևել Հովուապետին մերոյ Քրիստոսի ընկալցիս զանթառամ փառացն պսակ:

Սարկաւագն. Սուրբ խաչիւս աղաչես:

Հայրապետն. Պահպանեա զծառայս:

Եւ զկնի սկսանի Պատարագն:

Յիշեսջիք զՎահրամ Եպիսկոպոս Մանկունի զտպագրական ուղղագրիչ Մաշտոցիս յարժանակայց յաղօթս: